Ազգ
Azg
3 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 197(4815)
ISSN: 1829-1651

# Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին դիմակայելու պատրաստություն Մեջլիսում

Այդ մասին նոյեմբերի 1-ի համարում տեղեկացրել է «Աքշամը»: Ըստ թուրքական թերթի, պատրաստության աշխատանքները ձեռնարկում է Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն: Ենթադրվում է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին դիմակայելու Հալաչօղլուի նախաձեռնությամբ սկզբնավորվող աշխատանքներն առաջնորդի Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի նախագահ Ջեմիլ Չիչեքը:

Հալաչօղլուն պատասխանելով «Աքշամի» հարցերին, ասել է. «Հայկական սփյուռքը լրջորեն պատրաստվում է այսպես կոչված ցեղասպանության 100-րդ տարելիցին, որը լրանում է 2015-ին: Հետեւաբար մենք այսօրվանից պետք է միջոցներ ձեռնարկենք: Ես հանդիպել եմ Մեջլիսի նախագահի, մեծարգո Չիչեքի հետ: Հարցին քաջատեղյակ բազմաթիվ պատգամավորներ ունենք նաեւ «Արդարություն եւ բարգավաճում» ու Ժողովրդա-հանրապետական կուսակցությունների պատգամավորների շարքում: Հետեւաբար մեր խորհրդարանն ի վիճակի է հարցին վերկուսակցական մոտեցմամբ միջազգային ասպարեզում ծավալել անհրաժեշտ գործունեություն»:

Հ. Չ.

# ԱԺ նոր նախագահի թեկնածուներից դեռ վաղ է խոսելը, բայց խոսում են

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թե ո՞ր օպերայից է Հովիկ Աբրահամյանի հրաժարական տալու որոշումը՝ հարկ է, որ նա բացատրեր խորհրդարանական բոլոր լրագրողներին, որոնք երեկ սպասում էին Հ. Աբրահամյանի խոստացած մամուլի ասուլիսին, բայց նա գերադասել էր «Արմնյուզին» առանձին հարցազրույց տալ, «Ազատություն» ռադիոկայանին՝ առանձին: Բայց մինչ այդ հարցազրույցներից որոշ մասեր փոխանցելը նշենք, որ այնուամենայնիվ ինչ-որ պահի նա մոտեցել է լրագրողներին՝ հայտնելով, թե նոյեմբերի 14-ին կներկայացնի իր հրաժարականը, իսկ արդեն նոյեմբերի 21-ին ՀՀԿ-ում կարելի կլինի քննարկել ԱԺ նոր նախագահի թեկնածությունը: Իսկ առայժմ կոռեկտ չէ նոր թեկնածություններ քննարկելը, պաշտոնը դեռ զբաղված է:

ԱԺ նախագահի վերը նշված երկու հարցազրույցներից միքս անելով ասենք, որ իր հրաժականի մասին հարցին ի պատասխան նա ասել է, թե նախագահն առաջարկել է իրեն ղեկավարել ՀՀԿ նախընտրական շտաբը, եւ ինքն էլ նպատակահարմար է գտել այդ աշխատանքներն անթերի կատարելու համար գնալ այդ քայլին: Նա հերքել է այն լուրերը, թե իր հրաժարականը կապ ունի ՀՀԿ-ԲՀԿ տարաձայնությունների հետ կամ տեղի ունեցող հրաժարականների համաստեքստում է՝ ուրիշ օպերայից, մի խոսքով կամ՝ իր խոսքով: Մի բան կարող ենք հստակ ասել՝ ՀՀԿ-ն ոչ միայն խորհրդարանական ընտրություններին վարչական ռեսուրս է ունենալու, այլեւ Հովիկ Աբրահամյանի՝ տեղերում մարդկանց հետ աշխատել կարողանալու ռեսուրսը, քանի որ Աբրահամյանը նախկինում տարածքային կառավարման նախարար լինելով՝ տեղերի բոլոր խնդիրներն ու հնարավորությունները գիտե եւ նույնիսկ տեղական ղեկավարների անուններով է ճանաչում:

Ճիշտն ասած՝ «Արմնյուզի» կադրում Աբրահամյանը դիտվում էր որպես շատ մեծ բեռից ազատված մարդ, որը շուտով իր գործով է զբաղվելու (հանաք բան չէ՝ երկու ընտրություններում՝ նախագահական եւ խորհրդարանական շտաբներ է ղեկավարել): Ի դեպ, Հ. Աբրահամյանը վերը նշված հարցազրույցներից մեկում առաջին մարդն է եղել, որ բարձրաձայնել է հաջորդ խորհրդարանական ընտրությունների օրը՝ դա մայիսի 6-ն է. «Իմ հրաժարականի պրոցեսը նոյեմբերի 21-ին նոր կավարտվի, հաշվենք, որ նոյեմբեր ամիսը ավարտվեց, եւ քիչ ամիսներ են մնում, մայիսի 6-ին Ազգային ժողովի ընտրություններն են», ասել է նա՝ հավելելով, որ իր քայլով որոշ կուսակից ընկերների համար ուզում է օրինակ ծառայել (ո՞ւմ), որ պաշտոնին, աթոռին կառչած չէ, բայց եւ՝ ՀՀԿ հաղթանակի դեպքում նորից ակնկալում է նոր խորհրդարանի խոսնակի պաշտոնը. «Ես բանակ, ճամբար փոխող մարդ չեմ եւ աթոռից կառչելով չեմ ուզում կարեւորեմ իմ դերակատարությունը», ասել է նա՝ միաժամանակ բարձր գնահատելով ՀՀԿ նախընտրական շտաբը ղեկավարելու կուսակցության առաջարկը:

Տես էջ 2

ՀԱԼԱԾԱՆՔ՝ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ

# Մարդաորս Թուրքիայում

## *Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում ձերբակալված Ռագըփ Զարաքոլուն կալանվեց*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

**Վերջին շրջանում Անկարայի օրակարգի առաջնահերթ խնդիրն է դարձել PKK-ի քաղաքային թեւը համարվող KCK-ն: Դրան մեծապես նպաստել է վարչապետ Էրդողանի կառավարությունը, մեղադրելով 2009-ին ասպարեզ իջած այս կառույցին, մերթ անվտանգության ուժերի դեմ ահաբեկչական գործողություններ ձեռնարկելու, մերթ PKK-ի անջատողականությունը «ժողովրդավարական ինքնավարությամբ» հիմնավորելու, եւ առհասարակ՝ քաղաքացիների անդորրը գիտակցաբար խաթարելու մեջ: Դրանով փորձ է արվում ահաբեկչության դեմ պայքարի քողի տակ ահաբեկել այն մտավորականներին, որոնք ճշմարտությունը, մասնավորապես Հայոց ցեղասպանության իրողության ու քրդական հարցի առկայության մասին անկաշկանդ արտահայտվում են երկրում:**

**Այս մտավորականների մեջ առանձնահատուկ տեղ ունի Ռագըփ Զարաքոլուն: Նա մեր հասարակությանը հայտնի է Հայոց ցեղասպանության մասին բազմաթիվ հոդվածներով, հայ եւ օտարերկրացի գիտնականների թեմային առնչվող տասնյակ աշխատությունների հրատարակմամբ եւ անձնուրաց այն գործունեությամբ, որը նա տարիներ շարունակ ցեղասպանության ճանաչման համար ծավալում է Թուրքիայում:**



**Զարաքոլուն զորագիվ է կանգնում նաեւ Թուրքիայում բնակչության 1/4 կազմող քրդերի սահմանադրական իրավունքների համար մղած պայքարին: Հոկտեմբերի 30-ին Ստամբուլում KCK-ի դեմ պայքարի շրջանակներում թուրքական անվտանգության ուժերը ձերբակալել էին 47 հոգու, ներառյալ՝ Ռագըփ Զարաքոլուին: Հոկտեմբերի 1-ին ձերբակալվածներից 44-ը, դատարանի որոշմամբ, կալանվել է: Կալանվածների մեջ է նաեւ Թուրքիայի նոր սահմանադրության մշակման հանձնաժողովում ընդգրկված «Մարմարա» համալսարանի պրոֆ. Բյուշրա Էրսանլին:**

Տես էջ 3

# Քեթրին Էշթոնը նոյեմբերի երկրորդ կեսին կայցելի Հարավային Կովկաս

Եվրոմիության արտաքին եւ անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար Քեթրին Էշթոնը պատրաստվում է այցելել Հարավային Կովկաս՝ երեք հանրապետություններում հանդիպումների օրակարգով: Ադրբեջանական լրատվամիջոցները, հղում անելով Ադրբեջանում ԵՄ ներկայացուցչության ղեկավար Ռոլանդ Կոբիային, հայտնում են, որ այցելությունը տեղի կունենա նոյեմբերի երկրորդ կեսին:



ԵՄ գերագույն հանձնակատարի տարածաշրջանային այցելության մասին քիչ ավելի վաղ հիշատակել էր նաեւ Հայաստան-ԵՄ բանակցություններում Եվրոմիությունը ներկայացնող Գունար Վիգանդը, սակայն կոնկրետ ժամկետներ չեն նշվել, թեեւ մասնավորապես նոյեմբերի 20-ին Էշթոնը կլինի Բաքվում, ամենայն հավանականությամբ, մինչ այդ այցելելով Հայաստան եւ Վրաստան:

Արեւելյան գործընկերությունը, որի շրջանակներում հարավկովկասյան երեք երկրները տարբեր առաջընթացներով հարաբերություններ են հաստատել ու զարգացնում Եվրոմիության հետ, թերեւս հիմնական օրակարգային թեմաներից մեկը կլինի՝ չմոռանալով հակամարտությունների կարգավորմանը ԵՄ ներգրավման հարցերը, որոնք վերջին շրջանում առավել ակտիվությամբ են առաջ մղվում:

Ա. Հ.

# Դատարանը որոշեց արտաքսել Ասանժին



**Լոնդոնի Բարձր դատարանը երեկ ընդառաջել է Շվեդիայի իշխանությունների եւ վճռել է արտաքսել WikiLeaks կայքի հիմնադիր Ջուլիան Ասանժին: Այսպիսով հաստատվել է 2011-ի փետրվարին ստորին ատյանի դատարանի կայացրած վճիռը:**

**Ըստ արարողակարգի, հարկավոր է Ասանժին 10 օրվա ընթացքում հանձնել Շվեդիայի իշխանություններին: Այդուհանդերձ նա դեռ կարող է նոր գանգատարկմամբ դիմել Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանին, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:**

**Ասանժը աշխարհում հայտնի դարձավ այն բանից հետո, երբ WikiLeaks-ը հրապարակեց Աֆղանստանի եւ Իրաքի պատերազմներին առնչվող հարյուրհազարավոր փաստաթղթեր, ինչպես նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտի գաղտնի հեռագրեր: 2010-ի դեկտեմբերի 7-ին Լոնդոնում Ասանժին ձերբակալեցին Շվեդիայի դատախազության պահանջով: Այդ երկրում նրան կասկածում են բռնաբարության մեջ: Ասանժը իրեն մեղավոր չի համարում՝ ասելով, որ գործը հարուցվել է ամերիկյան գաղտնի փաստաթղթեր հրապարակած WikiLeaks-ի վարկաբեկման նպատակով: Լոնդոնում գրավի դիմաց ազատ արձակված Ասանժը մինչեւ օրս փաստորեն տնային կալանքի տակ է եւ բնակվում է իր գործարար բարեկամ Վոն Սմիթի տանը՝ Լոնդոնի մոտակայքում:**

# ԵԱՀԿ Մինսկի գործընթացում Թուրքիա՞ն է պակասում

## *ԵԱՀԿ նորընտիր գլխավոր քարտուղարի «նորարարությունները»*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հակամարտությունները վարկանիշ բարձրացնելու, առավել եւս վաստակելու թեմա չեն, որ յուրաքանչյուրը հանպատրաստից կարողանա կարծիք հայտնել, ուր մնաց լուծումներ ու զարգացումների տարբերակներ նախանշել, հատկապես, երբ դեռ նոր հայտնված ինչ-որ աթոռի վրա՝ չիմացածի մասին սկսում են մեկնաբանություններ անել: Հերթական անտեղյակի, բայց սեփական անտեղյակության մասին անտեղյակի դերում է հայտնվել Ստամբուլում անցկացվող Աֆղանստան-Թուրքիա-Պակիստան եռակողմ գագաթաժողովին մասնակցող ԵԱՀԿ նորընտիր գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերը՝ թուրքական «Today's Zaman»-ին տված բացառիկ հարցազրույցով:

«Թուրքիան կարեւոր խաղացող է տարածաշրջանում, որ կարող է քաղաքական մասնակցություն առաջարկել», խոսելով ղարաբաղյան խնդրի առկա վիճակից, թուրքական պարբերականի պնդմամբ, ասել է Լամբերտո Զանիերը: «Ես փաստում եմ, որ առաջընթաց չկա, ինչ-որ բան պակասում է», Զանիերը այսպես է արձագանքել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով բանակցությունների անցկացման ընթացքին:

Իրավիճակին նման գնահատական տվող Զանիերը նշել է, թե Թուրքիայի ներգրավումն այս հարցում պարտադրաբար պաշտոնական չպետք է լինի. «Ես չեմ խոսում բանակցություններում ֆորմալ դերի, այլ իրական մասնակցության մասին»:

Թե ինչ նկատի ունի ղարաբաղյան խնդրից ու Մինսկի գործընթացից ակնհայտորեն ոչ մի տեղեկություն չունեցող ԵԱՀԿ գլխավոր քարտուղարը, դժվար է գուշակել, սակայն հաջորդ միտքը նախորդից գոնե տարբերվում է այնքանով, որ ուղղակի սխալ դիտարկում է. «Թուրքիան սահմանակից է երկու երկրներին էլ, որոնք ներգրավված են հակամարտության մեջ»:

Որ բանակցային կողմերին հակամարտողներից Զանիերը չի տարբերում, հաստատ գովաբանության չէ արժանի, թեեւ Կոսովոյում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի փորձ ունեցող իտալացի դիվանագետի համար ուղղակի անհարիր է ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացում նոր խաղացողների ներմուծումը, երբ դրան դեմ են գրեթե բոլորը: Մյուս կողմից, ղարաբաղյան հարցին ընդհանրապես, եւ այդ առնչությամբ ամենաբարձր մակարդակով ընդունված փաստաթղթերին մասնավորապես անտեղյակ լինելու պարագայում Զանիերը բնավ էլ շահեկան վիճակում չի հայտնվում:

Տես էջ 2

ԱԶԳ

## Ընթացիկ

# Հարկային բեռը տեղափոխել բարձր եկամուտներ ունեցող ոլորտներ

**Փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման խորհրդի երկրորդ նիստը երեկ տեղի ունեցավ կառավարությունում: Դիմելով ներկաներին՝ խորհրդի նախագահ, վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձել է հարկային փոփոխությունների փաթեթին: Նրա հավաստմամբ, փաթեթի տրամաբանությունն է հնարավորին չափ բարելավել միջավայրը փոքր եւ միջին բիզնեսի համար եւ հարկային բեռը տեղափոխել այն ոլորտներ, որտեղ կան ավելի բարձր եկամուտներ:**

**Մասնավորապես, եկամտահարկի սանդղակում 10 տոկոս եւ 20 տոկոս շեմից բացի, սահմանվելու է նոր՝ 25 տոկոս շեմ, որը պետք է վճարեն այն ֆիզիկական անձինք, ովքեր ստանում են 2 միլիոն դրամից ավելի եկամուտ: Երկրորդը ալկոհոլային խմիչքների հարկման դաշտի հավասարեցումն է արտադրողների եւ ներմուծողների համար, քանի որ «եթե մենք մեզ թույլ տանք անհավասար մոտեցում, ապա մեր գործընկերներ պետությունները նույնպես կարող են իրենց դա թույլ տալ»: Միեւնույն ժամանակ, ավելացվում են հարկերն էլիտար խմիչքների վրա եւ 50 տոկոսով՝ օղու արժեքային դրույքաչափը՝ ներքին շեմը թողնելով անփոփոխ 500 դրամ: Ըստ վարչապետի, իրականում այս փոփոխությունը մեր արտադրողների համար ավելի բարենպաստ պայման կստեղծի, որովհետեւ նրանք գնային առումով ավելի լավ վիճակում են հայտնվում, իսկ թանկ օղիներից լրացուցիչ բյուջե կմտնի 2 միլիարդ դրամ:**

**Տիգրան Սարգսյանի մատնանշած երրորդ կարեւոր փոփոխությունը շքեղության հարկն է՝ 90 հազար դոլարից ավելի բարձր գին ունեցող մեքենաների մաքսային արժեքի նկատմամբ դրույքաչափը կբարձրացնա 20 տոկոսով: Չորրորդը՝ խաղատների, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման համար նախատեսված հաստատագրված վճարները կավելանան 50 տոկոսով՝ ակնկալելով 2 միլիարդ դրամ լրացուցիչ եկամուտ:**

**Միաժամանակ, փոքր եւ միջին բիզնեսի համար ընդլայնվում են արտոնագրային վճարների դաշտում գործունեության տեսակները, ընդգրկելով հանրային սնունդը, հյուրանոցային տնտեսությունները, թեթեւ մարդատար մեքենաներով ուղեւորափոխադրումներ իրականացնողներին, վարսավիրանոցները, ավտոտեխսպասարկման կայանները, ավտոկանգառները, բիլիարդ խաղերի կազմակերպումը: Փոքր եւ միջին բիզնեսին վերաբերող հաջորդ կարեւոր փոփոխությունը հարկային գերավճարներն այլ պարտավորությունների դիմաց առանց ուսումնասիրման եւ ստուգումների հաշվանցման հնարավորության տրամադրումն է: Բացի դրանից, պետության կողմից գերավճարների վերադարձման տույժ տուգանքները չեն դիտարկվելու որպես եկամուտ բիզնեսի համար եւ չեն հարկվելու:**

**«Այս փաթեթով վերացվում է նաեւ հասույթների գրանցման գիրքը, որը մշտական դժգոհությունների առարկա էր: Էապես պարզեցվում է նաեւ առաքման դեպքերի բովանդակությունը՝ պակասեցվում է լրացվող տողերի քանակը եւ այլն», նշել է վարչապետը: Նա տեղեկացրել է, որ ի տարբերություն փոքր եւ միջին բիզնեսի, խստացնելու են պահանջները խոշոր բիզնեսի նկատմամբ, որը զբաղվում է մեծածավալ ներկրումներով, սակայն չի ապահովում փաստաթղթաշրջանառությունը: Հանքաքարի, սեւ եւ գունավոր մետաղների ջարդոնների, ինչպես նաեւ փայտանյութի արտահանման նկատմամբ սահմանվելու են պարտադիր վճարներ, որոնց նպատակն է՝ վերջիններիս վերամշակումը կազմակերպել Հայաստանում, այլ ոչ թե արտերկրում:**

**Առանց հաշվարկային փաստաթղթերի ապրանքների տեղաշարժի պարագայում պատասխանատվության միջոցները նույնպես խստացվելու են: Խոսքն ամսական 15 միլիոն դրամից ավելի իրացման շրջանառություն ունեցող խոշոր հարկ վճարողների մասին է: Ներդրվելու են նորմեր, որոնք պարտադրում են, որ խոշոր գործարքները լինեն անպայման անկանխիկ:**

### Գործարարների երկու առաջարկ կյանքի է կոչվել

**Փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման խորհրդի երեկ տեղի ունեցած նիստի մասին լրագրողներին տեղեկություններ հաղորդեց խորհրդի անդամ, «Գործարար շահերի պաշտպանություն» կազմակերպության տնօրեն Գագիկ Պողոսյանը: Նա հայտնեց, որ նախորդ նիստից մինչ այս նիստը ընկած ժամանակահատվածում լուծվել են գործարարների բարձրացրած խնդիրներից երկուսը: Առաջինը՝ ձեռնարկությունների գրանցման ժամանակ արդեն տրամադրվում է նաեւ սոցվճարի համարը, որը մինչ այդ տրվում էր սոցիալական ծառայության կողմից: Երկրորդը՝ անշարժ գույքի վարձակալության գործարքի հեշտացումն ու ծախսերի նվազեցումն է: 2012-ի հունվարի 1-ից, տարածքի վարձակալման գործարքը ձեռներեցը կարող է կնքել կադաստրում՝ առանց նոտարական վավերացման, իսկ վճարը կլինի միանական:**

**Գագիկ Պողոսյանը տեղեկացրեց նաեւ, որ նիստի ժամանակ առաջադրվել են այլ հարցեր: Մասնավորապես առաջարկվել է ներմուծվող եւ տեղում արտադրվող նույն ապրանքների դեպքում տեղական արտադրանքի համար որոշակի նպաստավոր պայմաններ ստեղծել: Ըստ վերոնշյալ կազմակերպության ղեկավարի՝ այստեղ հարկ է նկատի ունենալ Առեւտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պահանջները եւ չստեղծել անհավասար պայմաններ ներմուծողների համար, բայց կան երկրներ, որոնք ԱՀԿ սկզբունքներով մեզ հետ չեն առաջնորդվում, եւ մենք էլ կարող ենք նրանց նկատմամբ նույն կերպ վարվել: Գագիկ Պողոսյանը որպես օրինակ բերեց Թուրքիան եւ թուրքական ապրանքները:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ԱԺ նոր նախագահի թեկնածուներից դեռ վաղ է...

*1-ին էջից*

Քոչարյանի հետ հարաբերությունների հետ իր հրաժարականի որոշումը կապ չունի, Քոչարյանի հետ ամենասերտ հարաբերություններն ունի Սերժ Սարգսյանը. «Այնպես որ՝ դուք այդ հարաբերություններից խոսեք», առաջարկել է նա: Այնուհետեւ նա խոսել է արդար ընտրություններ անցկացնելու հրամայականից՝ չենք մանրամասնում, քանի որ դրանք ի վերջո տվյալ լրատվամիջոցների հարցազրույցներն են:

Նշենք ուղղակի, որ երեկ քաղաքական ուժերի ներկայացուցիչներից շատերն այն կարծիքը հայտնեցին, որ քանի որ օրենսդրությունը չէր արգելում ԱԺ նախագահին միաժամանակ նաեւ նախընտրական շտաբ ղեկավարել, այսպիսով, այնուամենայնիվ, ԱԺ նախագահի պաշտոնանկության խնդիր է լուծվել:

Վերադառնալով ԱԺ նախագահի հրաժարականի ընթացակարգին՝ նշենք, որ հրաժարականը Հ. Աբրահամյանը կներկայացնի մոտակա քառօրյայում, նիստը վարողին, այդպես է ԱԺ կանոնակարգով, եւ եթե դրանից հետո 5 օրվա ընթացքում հետ չվերցնի հրաժարականը, դա կհամարվի ընդունված: Ազգային ժողովի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

ԱԺ նախագահի թափուր պաշտոնի համար նոր թեկնածուների անուններ երեկ տրվում էին: Ազգային ժողովում փորձեցինք ճշտել շրջանառվող անուններից ԱԺ պետաիրավական հանձնաժողովի նախագահ **Դավիթ Հարությունյանի** տրամադրվածությունը. «Ազգային ժողովի նախագահի պաշտոնը դեռեւս թափուր չէ: Դեռ առիթ կլինի հարցի քննարկման, սակայն այս պահի դրությամբ նման քննարկում տեղի չի ունեցել: Եթե ձեզ հետաքրքրում են իմ նախասիրությունները, ապա դա ամենեւին չի մտնում իմ նախասիրությունների մեջ, այդ պաշտոնով ես իսկապես հետաքրքրված չեմ: Կարծում եմ՝ կոռեկտ չէ այս պահին քննարկել, բայց ես հուսով եմ, որ ինձ նման առաջարկ չի ներկայացվի», ասաց նա լրագրողներին: Ի դեպ, Դ. Հարությունյանը բացառեց նաեւ Հ. Աբրահամյանի մոտալուտ հրաժարականի ներքաղաքական հենքը՝ նշելով, որ այդ դեպքում նախընտրական շտաբ չեն ղեկավարում:

Ամենայն հավանականությամբ Ազգային ժողովը մի քանի ամիս ղեկավարելու ծանր բեռը կընկնի ԱԺ նախագահի տեղակալ, ՀՀԿ-ական Սամվել Նիկոյանի վրա, նրա անունն էլ երեկ շրջանառվում էր: Այսպես թե այնպես՝ դա այնքան էլ երեւի էական չէ, քանի որ մի քանի ամիս հետո նոր խորհրդարան է ձեւավորվելու: Մանավանդ՝ ԱԺ նախագահն էլ էր երեկ այդ կարգի մի բան ասել լրագրողներին. «Արժանի թեկնածուներ միշտ էլ կան: Կարծում եմ, նրանցից մեկին գտնել կհաջողվի: Չեմ ուզում, որ ֆետիշացվի այդ հարցը, որովհետեւ մինչեւ ընտրություններ մնացել է մի քանի ամիս: Մենք ավելի գլոբալ խնդիրներ ունենք: Մենք նոր ընտրական օրենսգիրք ենք ընդունել, բայց մի բան է ընդունելը, մեկ այլ բան՝ այն պրակտիկայում կիրառելը»,- հայտարարել է խորհրդարանի խոսնակը, հավելելով, որ ներկայումս գլխավոր խնդիրներից մեկը ընտրությունների հանդեպ ժողովրդի վստահության վերականգնումն է»:

Երեկ նաեւ այլ պաշտոնափոխությունների սպասում կար: Լրագրողական դաշտն այն աստիճան էր վարակվել պաշտոնափոխությունների լրավիրուսով, որ ԱԺ հանձնաժողովներում շարունակվող բյուջետային քննարկումներից մի պահ բոլորը շեղվել էին, իսկ երեկ քննարկվում էր դատաիրավական համակարգի ֆինանսավորման բաժինը 2012 թվականին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Արթուր Բաղդասարյան. «Եթե ժամանակին ՕԵԿ-ը խոհեմ որոշում չկայացներ, երկիրը կկանգներ քաղաքացիական պատերազմի շեմին»

Կենտրոն համայնքում «Օրինաց երկիր» կուսակցությունը 5000 անդամ ունի: Նրանց հետ կուսակցության նախագահ **Արթուր Բաղդասարյանի** հանդիպումը երեկ էր՝ «Անի պլազա» հյուրանոցում: Բաղդասարյանի խոսքերով՝ նման հանդիպումներով ցանկանում են լսել համակիրների մտահոգությունները, ներկայացնել կուսակցության ապագա անելիքներն ու խնդիրների լուծման ձեւերը:



ՕԵԿ նախագահի խոսքերով՝ այսօր ՕԵԿ շարքերում լայնածավալ համալրում է սկսվել: Նա 2008-ը կուսակցության կյանքում դժվար շրջափուլ է անվանում: «Պայթյունավտանգ իրավիճակ էր ստեղծվել, եւ հենց «Օրինաց երկիր» կուսակցությունից էր կախված, թե ինչպիսին է լինելու պետության ապագան: Եթե ժամանակին ՕԵԿ-ը խոհեմ որոշում չկայացներ, ապա երկիրը կկանգներ քաղաքացիական պատերազմի շեմին»:

Բաղդասարյանը խոստովանում է, որ մարդկանց մի զանգված ՕԵԿ-ի որոշումը չհասկացավ, կուսակցությունը վարկանիշի անկում ունեցավ, սակայն Տեր-Պետրոսյանին միանալ չէին կարող, որովհետեւ «մեզ հետ խոսում էր ագրեսիայի լեզվով»:

Նա շեշտում է, որ խորհրդարանում խմբակցությունը 200 օրենքի նախագիծ է հեղինակել: «Իսկ դա նշանակում է 200 խնդրի լուծում»: Բաղդասարյանը չի ժխտում, որ երկրում սոցիալական ծանր վիճակ է, սակայն, նրա համոզմամբ, խնդիրները լուծելու համար պետք է համախմբվել: Նա առանձնացնում է 3 խնդիր, որ առավելապես հուզում են Հայաստանի քաղաքացուն՝ անվտանգ ապրելու, առողջ ապրելու իրավունք եւ սոցիալական բավարար պայմանների առկայություն: Բաղդասարյանի խոսքով՝ պետությունը պետք է աշխատատեղեր ստեղծի, որպեսզի քաղաքացիները դրսում աշխատանք չփնտրեն, սակայն դրան հասնելու համար անհրաժեշտ է միասնական գործել:

Նա առաջարկում է ուսանողական երկարաժամկետ վարկավորման համակարգ ներդնել, որպեսզի երիտասարդը բարձրագույն կրթություն ստանա եւ 20 տարվա ընթացքում պարտքերը մարի:

ՕԵԿ նախագահը շեշտում է, որ անհրաժեշտ է խթանել մանր եւ միջին բիզնեսը: Նրա գնահատմամբ՝ այսօր լուրջ խնդիր է սուպերմարկետների շատանալը, որոնց մրցակցությանը փոքր խանութները չեն դիմանում եւ փակվում են: «Պետք է օրենքով սահմանափակել խոշոր սուպերմարկետների թիվը: Պետք է հաշվել, թե համայնքների բնակչությունը որքան սուպերմարկետի անհրաժեշտություն ունի, եւ այդքանը կառուցելու իրավունք տալ, որպեսզի փոքր խանութներն էլ կարողանան գործել», եզրափակեց Բաղդասարյանը:

Հ. Հ.

# ԵԱՀԿ Մինսկի գործընթացում Թուրքիա՞ն է պակասում

*1-ին էջից*

**ԵԱՀԿ գլխավոր քարտուղարն իր «խիստ անձնական» կարծիքով գտնում է, թե «Թուրքիան պետք է պայմաններ ստեղծի երկու կողմերի երկխոսության խթանման համար», դրան ավելացնելով, թե ԵԱՀԿ-ն մենաշնորհ չունի հակամարտությունների կարգավորման հարցում, չմոռանալով ասվածի պոչին ավելացնել. «Ներկայումս քննարկվում է, թե պետք է հակամարտությունների հարցերը տեղափոխվեն նաեւ այլ կառույցներ, բայց ես վստահ չեմ, որ տեղափոխումը կլուծի հարցը»:**

**«Հարցով զբաղվող ընկերության մեջ չէ խնդիրը: Հարցը հակամարտության բուն էությունն է», ԵԱՀԿ-ին ուղղված քննադատության առնչությամբ ասել է Զանիերը՝ պաշտոնական անգիր արվող հատվածներից մի կտոր մեջբերելով, թե «կողմերի քաղաքական կամքն է պետք վերջ դնելու այդ պատմական հակամարտությանը»:**

**Հարցազրույցի մնացյալ հատվածը, ըստ էության, մեջբերում է «վայրի արեւմուտքում» գործածված հայտնի խոսքերից. Զանիերը, նշելով ԵԱՀԿ ջանքերը երկխոսության անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ, հիշեցրել է հայտնի արտահայտությունը. «Մեկն էլ կարող է ձին ջրի մոտ բերել, բայց հազարն անգամ չեն կարող ստիպել ջուր խմել»: Այդուհանդերձ, 2002-2006 ԵԱՀԿ հակամարտությունների կանխարգելման կենտրոնը ղեկավարած Զանիերը թերեւս մեկ հարցում ճիշտ է գնահատել իրավիճակը. «Մենք փորձում ենք տեղում հարցը կարգավորել, բայց իրավիճակը խնդրահարույց է դառնում անվտանգության առումով»:**

**Կրթությամբ իրավաբան Զանիերի պարագայում քիչ տարօրինակ է, որ հակամարտության կարգավորման ներկա վիճակին հաջորդող քայլն, ըստ նրա, առավել վատթարանալու անթույլատրելիության ապահովումն է:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# Անցուդարձ

## Չի բացառվում, որ Թուրքիան «երկրաշարժ» անվան տակ պայթեցնի Վանի դեռեւս պահպանված հուշարձանները

1976 թ. Գառնիի երկրաշարժից փլուզվեց 15 եկեղեցի, 1931-ի երկրաշարժի ժամանակ ավերվեց Տաթեւի եկեղեցին: 1988-ի Սպիտակի երկրաշարժից Շիրակի եւ Լոռու մարզերում 8000 հուշարձանից 2000-ը վնասվեցին՝ 155-ը անդարձ կորավ, 10 եկեղեցի խոնարհվեց: Նրանց վերանորոգման հարցը վերջին 20 տարվա ընթացքում երբեւէ չի քննարկվել: Պետությունը ֆինանսներ չունի հուշարձանները վերանորոգելու:

Հոկտեմբերի 23-ին Վանում տեղի ունեցած երկրաշարժից հետո հայկական հուշարձանների սեյսմակայունության խնդիրը դարձավ արդիական: Որ երկրաշարժից Արեւմտյան Հայաստանում գտնվող հայկական հուշարձանները վնասված կլինեն, հուշարձանագետ **Սամվել Կարապետյանը** չի բացառում: Վարագա վանքը, որ Վանի նահանգում է, ուժեղ երկրաշարժի կարիք էլ չի զգում: Գմբեթը փլված է, քարերը՝ տեղաշարժված, մի քանի ագամ գանձագողության նպատակով պատերը ջարդել են, անցքեր բացել, թեթեւ երկրաշարժի դեպքում էլ եկեղեցին առնվազն կիսով չափով կփլվի: Կարապետյանի գնահատմամբ՝ երկրաշարժից վնասված կլինեն նաեւ Բերկրիի շրջանի Սուրբ Ստեփանոս եկեղեցին, Սուրբ Գեւորգ եկեղեցու պահպանված գավիթը:

Մինչդեռ Արեւմտյան Հայաստանում հայկական հուշարձաններն ու եկեղեցիները առավելապես ոչ թե տարերային աղետների պատճառով են ավերվում, այլ՝ պետական համակարգված քաղաքականության:

«Շատ եկեղեցիների գմբեթները ավերվել են ոչ երկրաշարժից: Պետության հասցրած վնասն ավելի մեծ է: Թուրքիայի քաղաքացիները հիվանդ են, նրանց այդպես դաստիարակել է պետությունը: Եթե 40-ականներին պետությունն էր պետական մակարդակով գանձախուզության պատրվակով քանդում հայկական եկեղեցիներն ու պայթեցնում դրանք, ապա այսօր թուրքերն ու քրդերը առիթը բաց չեն թողնում գանձախուզության նպատակով եկեղեցիներ ու գերեզմանատներ ավերելու»:



Կարապետյանը թատրն է անվանում թուրքական կառավարության խոստումը, որ հաջորդ տարի վերանորոգելու են Վարագա վանքը: Նա հիշեցնում է, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերանորոգմանը զուգահեռ թուրքական կառավարությունը պայթեցրեց մի քանի հայկական կանգուն եկեղեցիներ եւ խաչքարերով գերեզմանատներ: «Սա իհարկե թատրն է, սակայն գոնե այդ կերպ մի եկեղեցի կփրկվի»:

Սամվել Կարապետյանը նշում է, որ Վանի երկրաշարժից հետո մեր պետությունը պետք է մասնագետների խումբ ուղարկեր Արեւմտյան Հայաստան, որպեսզի ուսումնասիրեին, թե երկրաշարժն ինչ չափի վնաս է հասցրել հուշարձաններին: Կարապետյանը չի բացառում, որ թուրքերը երկրաշարժի անվան տակ մնացյալ կանգուն գավիթներն ու հուշարձաններ էլ կպայթեցնեն:

Մշակույթի նախարարության պատմական եւ մշակութային հուշարձանների պահպանման գործակալության պատմական միջավայրի եւ հուշարձանների պահպանման եւ օգտագործման վարչության պետ **Դովարդ Առուշանյանի** գնահատմամբ՝ Հայաստանում հուշարձանների մեծ մասը նույնպես համարվում է վթարային: Դրանք քայքայված են, քարերը՝ տեղաշարժված, ինչից հուշարձանների սեյսմակայունությունը կրկնակի նվազում է: Պետական բյուջեն գումարներ տրամադրում է վթարված հուշարձանները վերանորոգելու համար, սակայն դրանք բավարար չեն: Սպիտակի երկրաշարժից հետո 20 տարվա ընթացքում վերանորոգվել է ընդամենը 3 հուշարձան:

Դսեղի Սուրբ Գրիգոր եկեղեցի, Կիրսարի կամուրջ, Արջուց եւ Հավուց թառի եկեղեցիներ, Սանահին: Սամվել Կարապետյանը խոստովանում է, որ այս շարքը կարող է բավական երկար շարունակել: Դրանք Հայաստանի տարածքում գտնվող հուշարձաններն են, որոնք համարվում են վթարային եւ ընդգրկված են սեյսմավտանգ հուշարձանների ցանկում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԻ ՇՈՒՏՈՎ

## Կոնդոլիզա Ռայս. «Ես աղաչում էի Փելոսիին՝ կասեցնել հայկական բանաձեւը...»



**ԱՄՆ նախկին պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը պատրաստվում է գիրք հրատարակել «Չկա ավելի բարձր պատիվ» վերնագրով: Գրքում, որի որոշ հատվածներ արդեն իսկ հայտնի են դարձել մամուլին, Ռայսն անդրադառնում է իր պաշտոնավարման տարիներին, մասնավորապես Վաշինգտոն-Անկարա հարաբերություններին: Նախկին պետքարտուղարը պատմում է իր եւ Աբդուլլահ Գյուլի, վարչապետ Էրդողանի հետ հարաբերությունների, թուրք-քրդական բախումների ու տարածաշրջանում ստեղծված լարվածության, Թուրքիայի ԵՄ անդամակցության, ինչպես նաեւ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության բանաձեւի տապալման համար կոնկրես իր մղած պայքարի մասին: «Ոչ ոք չի կարող հերքել ողբերգական իրադարձությունները: Սակայն դա ոչ թե քաղաքական գործիչների, այլ պատմաբանների գործն է, հենց վերջիններս էլ պետք է որակումներ տան», Ցեղասպանության մասին իր դիրքորոշումն է հայտնում Ռայսը՝ շարունակելով. «Ճիշտ այն պահին, երբ թուրք-իրաքյան սահմանին առկա լարվածությունը իր գագաթնակետին էր հասել, Կոնգրեսի Ներկայացուցիչների տան արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ընդգրկեց բանաձեւը լիագումար նիստի օրակարգ: Ներկայացուցիչների տան նախագահ Նենսի Փելոսիին աղաչում էի՝ այդ բանաձեւը քվեարկության չդնել: Սակայն Փելոսին ինձ ասաց, որ ինքը ոչինչ չի կարող անել: Պաշտպանության նախարար Գեյթսի հետ մամուլով հայտարարեցինք, որ դեմ ենք բանաձեւին, եւ փոխանցեցինք Իրաքում մեր զինվորական հրամանատարության հայտարարությունը, որ ստեղծված իրավիճակում առկա է մեր կարեւոր ռազմավարական դաշնակից Թուրքիային կորցնելու հավանականությունը: Մենք թուրքերին էլ խոստացանք, որ ամեն գնով կտապալենք այդ բանաձեւը Կոնգրեսում եւ ի վերջո հասանք մեր նպատակին: Հայերը, որ ցանկանում էին զարգացնել Թուրքիայի հետ հարաբերություններ, նույնպես այդ բանաձեւի ընդունման կարիքը չունեին», հիշել է Կոնդոլիզա Ռայսը:**

**Իսկ երբ կհրապարակվի Ռայսի գիրքը, որը, ինչպես վերը նշեցինք, վերնագրված է՝ «Չկա ավելի մեծ պատիվ», կարելի է մեկ հարց ուղղել նախկին պետքարտուղարին. ո՞րն է ավելի մեծ պատիվ՝ հավատարի՞մ մնալ սեփական երկրի հիմնական, հռչակված արժեհամակարգին ու հարգել մարդու իրավունքները, դատապարտելով պատմության բոլոր հանցագործություններն ու հանցագործներին, թե՞ «չկա ավելի մեծ պատիվ», քան պահպանել Թուրքիայի հետ ռազմավարական կարեւոր հարաբերությունների մակարդակը:**

Հ. Ա.

## Մարդաորս Թուրքիայում

*1-ին էջից*

**«Բուգյուն» թերթի երեկվա համարի վկայությամբ, հարցաքննության ընթացքում տկն Էրսանլիին եւ պրն Զարաքոլուին ուղղվել է 50 հարց՝ կապված «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության քաղաքային ակադեմիայի աշխատանքներին մասնակցելու եւ որեւէ կազմակերպությանն անդամակցելու հետ: Այս կուսակցությունը խորհրդարանական է, վերջին ընտրություններում ստացել էր 35 պատգամավորական տեղ: Ի՞նչ առնչություն ունեն խորհրդարանական կուսակցության քաղաքական ակադեմիայի աշխատանքները ահաբեկչության հետ, ըստ երեւույթին գիտեն միայն թուրքական իշխանությունները:**

**Համենայն դեպս, հոկտեմբերի 30-ին «Ռագըփ Զարաքոլուին անհապաղ ազատ արձակելու» պահանջով հաղորդագրություն էր տարածել Կալանված լրագրողների հետ համերաշխության պլատֆորմը, իսկ Անկարայի մտքի ազատության նախաձեռնությունը «Բավակա՛ն է, վերջ տալ ահաբեկչության բնույթ կրող մարդաորսին» կարգախոսով կազմակերպել է ստորագրահավաք:**

**Պլատֆորմի հաղորդագրության մեջ ասված է. «Ձերբակալվեց հրատարակիչ , հրապարակախոս, մարդու իրավունքների պաշտպան Ռագըփ Զարաքոլուն: Հոկտեմբերի 4-ին KCK-ի դեմ Ստամբուլում իրականացվող գործողությունների շրջանակում ձերբակալվել, ապա եւ կալանվել է նաեւ նրա որդին՝ Դենիզ Զարաքոլուն:**

**Ռագըփ Զարաքոլուն աշխարհում եւ Թուրքիայում հանրաճանաչ մտավորական է, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, Թուրքիայի հրատարակիչների միության հրատարակության ազատության կոմիտեի նախագահը եւ «Բելգե» հրատարակչության սեփականատերը: Մարդու իրավունքների միության հիմնադիրներից է, ինչպես նաեւ սյունաշարի հեղինակ «Օզգյուր գյունդեմ» եւ «Էվրենսել» թերթերում: Զարաքոլուի դեմ հարուցված են բազմաթիվ գործեր, նա միտումնավոր է ձերբակալվել: Նպատակը, ի դեմս Զարաքոլուի, մտավորականներին առաջադեմ հասարակայնությանը խոսքի ու մամուլի ազատություններն ահաբեկելն է, սաստելը եւ սաստելու միջոցով լռեցնելը:**

**Նույն նկրտումով է ձերբակալվել նաեւ պրոֆ. Բյուշրա Էրսանլին: Վարչապետ Էրդողանն իր գրպանում ունի կալանման ենթակա 1400 հոգու մի ցուցակ, որի մեջ ընդգրկվածներին կալանում են «հասարակության դեմ պայքարի» բնույթ կրող «ահաբեկչության դեմ պայքարի» օրենքին համապատասխան: Կազմակերպվում է մարդաորս, մտավորականները դառնում են «ահաբեկչության դեմ պայքարի» օրենքի ահաբեկման թիրախը:**

**Մենք՝ Կալանված լրագրողների հետ համերաշխության ներկայացուցիչներս, պահանջում ենք անհապաղ ազատ արձակել Ռագըփ Զարաքոլուին եւ տկն Բյուշրա Էրսանլիին՝ դատապարտելով նրանց ձերբակալությունը»:**



## Յունիբանկը UNISTREAM դրամական փոխանցումների համակարգի հաճախորդներին առաջարկում է վարկավորման արտոնյալ պայմաններ U-Stream+ քարտով

UNISTREAM դրամական փոխանցումների համակարգի հաճախորդների համար Յունիբանկը պատրաստել է հատուկ առաջարկ՝ U-Stream+ քարտ մինչեւ 150 հազար դրամ վարկային գծով: Վարկի պայմանների համաձայն, 100 հազար դրամ սահմանաչափով քարտերը կարող են ձեռքբերել այն ֆիզիկական անձինք, ովքեր UNISTREAM համակարգով ուղարկել կամ ստացել են դրամական փոխանցում: 150 հազար դրամ սահմանաչափով քարտերը նախատեսված են Յունիբանկի այն մշտական հաճախորդների համար, որոնք տարվա ընթացքում UNISTREAM համակարգով իրականացրել են առնվազն 5 դրամական փոխանցում՝ 3 000 դոլարից ոչ պակաս գումարով: Վարկավորման պարտադիր պայման է հանդիսանում բացասական վարկային պատմության բացակայությունը:

U-Stream+ քարտը շահեկանորեն առանձնանում է վարկավորման արտոնյալ պայմաններով եւ ձեւակերպման պարզությամբ: Վարկային գծի ստացման համար հաճախորդը ներկայացնում է միայն անձնագիրը եւ սոցիալական քարտը: Հաճախորդներին տրամադրվում է ArCa Classic տեսակի քարտ: Վարկի տոկոսադրույքը կազմում է 24% տարեկան: Ընդ որում, տոկոսադրույքը կիրառվում է միայն փաստացի օգտագործված գումարի նկատմամբ:

U-Stream+ վարկի հիմնական առավելություններից է 2 տոկոսային կետով տոկոսադրույքի իջեցման հնարավորությունը՝ վարկային պայմանագրի գործողության երկրորդ տարում: Դրա համար հաճախորդը տարվա ընթացքում պետք է առնվազն 5 անգամ օգտվի UNISTREAM համակարգից եւ UNIPAY քարտով ամսական իրականացնի առնվազն 5 000 դրամի կոմունալ վճարումներ: UNIPAY քարտը հաճախորդներին տրամադրվում է անվճար եւ նախատեսված է կոմունալ ծառայությունների դիմաց վճարման գործընթացն առավելագույնս արագ եւ հարմարավետ կազմակերպելու համար: Հաճախորդը բանկի աշխատակցին տրամադրում է միայն UNIPAY քարտը եւ կատարում կոմունալ վճարումները հաշված րոպեների ընթացքում:

Հաշվի առնելով, որ U-Stream+ վարկային գիծը նախատեսված է իր իսկ հաճախորդների համար՝ Յունիբանկը քարտի սպասարկումն իրականացնում է լրացուցիչ արտոնություններով: Մասնավորապես, քարտի սպասարկումը առաջին տարվա համար իրականացվում է անվճար, կանխիկացման տոկոսադրույքը կազմում է 0%: Քարտի գրավիչ առանձնահատկությունը հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող բարձր տոկոսադրույքն է՝ 5%:

## Ուղեւորություն

# Շուշին՝ պատմաերկրագիտական թանգարանում

Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն **Աշոտ Հարությունյանը** պատմեց, որ Շուշիի այցեքարտը հանդիսացող թանգարանն 1992 թվականից, Շուշիի ազատագրումից անմիջապես հետո արդեն գոյություն ունի: Շենքի պատմությունը հետաքրքրական է՝ տասներորդ դարում եղել է հոսպիտալ, անգլիացիներն են սարքել. Հադրութի շրջանում ոսկու հանք է եղել, բանվորներին բուժել են այս հոսպիտալում: Հետո՝ խորհրդային տարիներին շենքը դարձել էր ծննդատուն: 1973-75 թվականներին այստեղ արեւելյան գորգերի թանգարան էր: Երբ 1992 թվականին այս շենքում բացվեց երկրագիտական թանգարանը, մի հարյուր հիսուն ցուցանմուշ ուներ, մի տարի հասարակական հիմունքներով է աշխատել: Հարությունյանը 1996 թվականին է նշանակվել տնօրեն եւ հպարտությամբ նշում է, որ 5000 ցուցանմուշ ունի այսօր թանգարանը, որոնք Շուշիի անցյալի եւ ներկայի պատմությունն են ամփոփում: Ցուցադրանքը ժամանակագրորեն 25 մասի է բաժանված, սկսվում է հին՝ նախապատմական շրջանից, հետո անցնում միջնադար, հետո՝ տասնիններորդ դար, ապա նոր պատմություն ու Շուշիի ազատագրում: Շուշիի ազատագրմանը նվիրած սենյակ կա թանգարանում՝ Շուշիի ազատագրման մակետով, պատերազմական զենքերով, լուսանկարներով: Կենցաղային եւ մշակույթի առարկաներ են ցուցադրված, հատկապես՝ մշակույթի, որը տարբեր ժամանակներում Շուշիում շատ զարգացած էր. «Թանգարանում մ.թ.ա. X-VII դարերի արժեքավոր նյութեր ունենք, որոնք 2005 թվականին հայտնաբերել է Շուշիի հնագիտական արշավախումբը՝ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ: Ես ինքս այդ արշավախմբի անդամ եմ: Ավելի շատ հնագիտական-հետախուզական պեղումներ իրականացրինք՝ լուրջ պեղումները հետոյի խնդիր են: Բայց արդեն գտնված նյութերն ապացույց են, որ Շուշին որպես բնակավայր գոյություն է ունեցել հին շրջանից՝ մ.թ.ա. X դարից Շուշիում բնակավայր է եղել: Ավելի լայնամասշտաբ պեղումների անհրաժեշտություն կա՝ երկու դամբարան պեղելով գոյություն ունեցող 2000 դամբարանից (մեծ մասը խորհրդային ժամանակ ավերված) մենք ընդամենը կարողացել ենք ապացուցել, որ տարածքը մտնում է քուռ-արաքսյան մշակութային գոտու մեջ: Էդ ժամանակաշրջանից խեցեղեն ունենք, օբսիդիանից նետասլաք, դանակի շեղբեր՝ էլի օբսիդիանից, երկաթե դարի նիզակի ծայրակալ, արծաթից կրծքազարդ եւ գուրզի մետաղական մասը»:


Թանգարանի շենքը

Քուռ-արաքսյան մշակույթը հիմնականում հայկականն է, բայց կրում է շրջակա ժողովուրդների ազդեցությունը. «Ինչ գտել ենք, այդ նյութերն իրենց վրա կրում են սկյութական ազդեցություն: Եվ սա բերում է այն մտքին, որ Շուշին տարածաշրջանի հետ լուրջ կապեր է ունեցել արդեն մ.թ.ա. X դարում»:

Թանգարանում բավական լավ ներկայացված է Շուշիի ծաղկման վերջին շրջանը, հատկապես մշակույթի բարձր զարգացման ապացույցները: Խոսքը 19-րդ դարի վերջի մասին է, երբ Շուշին Այսրկովկասի երրորդ քաղաքն էր դարձել մշակութային զարգացմամբ. «Էդ շրջանում լինելով առեւտրա-արհեստավորական քաղաք, ուներ բավականին հարուստ խավ, որը կարողացել է մշակույթ զարգացնել: Երբ տնտեսական պայմաններ չեն լինում, մշակույթ չի զարգանում: 1901 թվականին բացվել է Շուշիի ռեալական դպրոցը, դա չէր լինի, եթե չլիներ մեծահարուստ Գրիգորի Առաքելովը, որն իր միջոցներով մենակ սարքեց ռեալականի գերհսկա շենքը՝ այսօր ազգովին չենք կարողանում սարքել:

Լեոյի (Առաքել Բաբախանյանի) հետ կապված սենսացիոն ցուցանմուշներ ունենք. նախ նրա գրասեղանն ենք ձեռք բերել, գրամեքենան, որով տպագրել է: Եթե ֆինանսական աջակցություն լինի, Շուշիում անգամ Լեոյի տուն-թանգարան կարելի է բացել: Մենք նույնիսկ գտել ենք այն տունը, որտեղ ապրել է Լեոն: Դա քաղաքի ներքեւի մասում է, քարից տուն է այն փողոցում, որ հիմա Լեոյի փողոց է կոչվում»:

Հայ մշակույթի մեծերից, ծնունդով շուշեցի, հայտնի քանդակագործ Հակոբ Գյուրջյանի մասին միայն տեղեկատվություն կա թանգարանում (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ), նա եղել է ֆրանսիացի քանդակագործ Օգյուստ Ռոդենի աշակերտը, ֆրանսիական ակադեմիայում է սովորել: Շուշիում, իհարկե, որեւէ գործ չկա Գյուրջյանից՝ Հայաստանում եւ Ֆրանսիայում են նրա գործերը: Նվիրատվություն լինի՝ գուցե հնարավոր լինի նաեւ նրա գործերից ձեռք բերել. «Արդեն հիմա պետությունը ֆինանսական միջոցներ է հատկացնում այդ կարգի նպատակների համար, բայց չունենք, օրինակ, նորոգման ծախսեր, մեր աշխատավարձերն էնքան էլ բարձր չեն, տղամարդու աշխատավարձ չեն՝ 80 հազարով պարզ երեսով տուն մտնել չի լինի, մանավանդ այսօրվա գներով: Մենք մեր միջոցներով էս սենյակի առաստաղը ծածկել ենք»:

Ա. Հարությունյանը նամակ էր գրել «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Շուշիի գրադարանի բացումը որ եղավ, այդ օրը հանդիպեց հիմնադրամի տնօրենի հետ, ով ասել է, որ հետագայում հաշվի կառնի երկրագիտականի վերաբերյալ առաջարկները:

Երկրագիտական թանգարան շատ հյուրեր են գալիս. եթե 1997-ի ողջ ամառը գալիս էր 150 այցելու, այս տարվա միայն հունիս ամսին 300 այցելու է եղել: Առայժմ տարբեր հովանավորների դիմելով են աշխատում: Նորոգումները, օրինակ, «Թուֆենկյան» հիմնադրամի աշխատանքի արդյունքն են:

Առաջնահերթ պետք է լուծվի թանգարանի շենքը ցրտից հերմետիկ պաշտպանելու խնդիրը. «Զբոսաշրջության վարչությանն ենք պատկանում, մնացած մանր-մունր պրոբլեմները դիմում ենք, լուծում են: Թանգարան եւ զբոսաշրջություն՝ էստեղից էլ վերաբերմունքը երեւում է, թանգարանը պետք է լիներ մշակույթի նախարարության իրավասության ներքո: Ծիծաղելի է՝ թանգարան եւ զբոսաշրջություն: Մարդիկ պետք հասկանան, որ թանգարանը մետաղ, փայտ կուտակելու պահեստ չէ, այլ նաեւ գիտահետազոտական հիմնարկ է, իսկ այնտեղ համապատասխան կրթության մարդիկ պետք է լինեն: Ասենք, քոլեջ ավարտած մարդուն ասում են՝ գնա, թանգարանում աշխատիր: Չի ստացվում: Ես արդեն լուծում եմ այդ հարցը, 9 աշխատող ունենք, օրինակ, էքսկուրսավարի հարցը լուծել եմ՝ երեք լեզվի տիրապետող մարդ է աշխատում: Փորձում եմ ներգրավել մարդկանց, որոնք ոչ թե թանգարանի աշխատանքը աշխատատեղ են համարում, այլ նվիրվում են:


Թանգարանի տնօրեն Աշոտ Հարությունյան

Թանգարանում կարելի է հանդիպել հայտնի շուշեցիների մասին վկայությունների. Մուրացան, Կոնստանտին Մելիք-Շահնազարյան, Սաշա Օգանեզաշվիլի: Մուրացանի ձեռագրերի կրկնօրինակներ են միայն: Բնօրինակ վկայությունների առումով Ա. Հարությունյանը հպարտանում է խաչքարերով. Շուշիում խաչքար գտնելը հրաշք է, քանի որ ադրբեջանցիք ոչնչացրել են ամբողջը: Հայկական գերեզմանոցի մաքրման ժամանակ հողի տակից է հանվել: Ինը խաչքար է՝ Շուշիի տարածքից:

Թանգարանը, փաստորեն, Շուշիի կենտրոնից հեռու է, ժամանակին ուզեցել են տեղափոխվել նախկին պետական քաղաքային դպրոցի շենքը՝ կառուցված 1874 թվականին: Բայց շենքն այդպես էլ չտրամադրվեց թանգարանին, անգամ այդ հրաշալի շենքը քանդվել է, մնացել է ֆասադը. «Ես սլաքներ եմ կպցնում, որ թանգարանը գտնեն, երկու ռեկլամային շիթ դրված է Շուշիի մուտքի մոտ: Եթե քաղաքի անձնագիրն այս թանգարանն է, սա պետք է կենտրոնում լինի: Հադրութինը, օրինակ, կենտրոնում է: Մշակույթի նախարարությունը Մարիամաց ուսումնարանի շենք է տեղափոխվում, գուցե թե այդ շենքում կարող են իրենք ինչ-որ բան հասկացնե՞լ»:

Թանգարանում մի գեղեցիկ, 19-րդ դարի շտամպ-կնիք կա, որով օճառի գործարանում կնքում էին օճառը, վրան էլ գրելով. «Ամենալավ օճառը Շուշիի օճառն է, Ապայունի եղբայրներ», սա շտամպի վրա գրված է կես պարսկերեն, կես արաբերենով: Կնիքը պատմում է, փաստորեն, հայ գործարանատեր եղբայրների մասին, որ 19-րդ դարում Շուշիում օճառի գործարան ունեին, իսկ արաբերենն ու պարսկերենը խոսում է այն մասին, որ օճառն արտահանվել է տարածաշրջանի երկրներ: Թանգարանում նմուշներ կան հայտնի շուշեցիների՝ Նիկոլ Դումանի, Խանասորա Վարդանի, Միքայել Վարանդյանի, Թորգոմ Թունյանի մասին, ովքեր բոլորը թեմական դպրոց ավարտած մարդիկ են, Հայաստանի Հանրապետության հիմնադիրներից Արամ Մանուկյանը եւս ծագումով շուշեցի է: Թանգարանում մի հին կարաբին կար՝ հայտնի գործիչներից մեկինն էր հավանաբար, ո՞ւմը՝ դեռ չէին որոշել: Շուշիի այցեքարտերից է Ժամհարյանների հոսպիտալը, որը պատկերող տարբեր թվերի հին նկարներով մի անկյունում էին ձեւավորել: Նույնպիսի անկյուններ ունեին թանգարանում ռեալական դպրոցը, Մարիամաց կրթական համալիրը:

Ա. Հարությունյանի հետ խոսեցինք Շուշիի ներկայի եւ ապագայի մասին.

«Շուշին զբոսաշրջության կենտրոն դարձնե՞լը. էդ բոլորը խոսքեր են, որովհետեւ մարդիկ չեն պատկերացնում՝ ինչպե՞ս:


Թանգարանի ցուցադրանքից

Նախ եւ առաջ Շուշին պետք է բնակեցվեր թե՛ շուշեցիներով... եթե մարդը եկել է Շուշի՝ սոցիալական խնդիր լուծելու, նա չի կարող մշակույթով ապրել: Չեմ կարծում, որ վաղը Շուշին այդպիսին կլինի: Հետո կարեւոր վատ բան է կատարվել՝ մենք կորցրել ենք շուշեցու ունիկալ կերպարը, դա մոռանանք պիտի: Մենք կա-

ստեղծենք նոր մշակույթ, եւ դա չի լինի հին Շուշիի մշակույթը, դա նորը կլինի: Կապը կտրված է: Մեզ չեն հարցնում, իրենց համար անում են: Բոլորը խոսում են Շուշիից, բայց որ պետք լինի՝ շուշեցուն կգցեն էլ Շուշիից: Ասում էլ է՝ չեն լսում: 1997-ից ի վեր դա եմ արել, հա մարդկանց բացատրել եմ՝ որ Շուշին նորոգել առանց շուշեցուն հարցնելու չի կարելի: Ասենք՝ երեք կապույտ քոթեջները Ղազանչեցոց եկեղեցու ուղղությամբ. գիտե՞ք նրանց տեղն ինչ է եղել, կամարակապ եռահարկ շենք, քանդեցին: Ու ինձ ասում են՝ շուշեցի, հաշտվիր այդ մտքի հետ: Խի՞ եք քանդել, ո՞ւմ էր խանգարում, այդպիսի ունիկալ շենք չկար...

Ռեալական դպրոցը վերականգնելու համար փող չկա, բայց մարդիկ փող են գտնում մզկիթ են նորոգում՝ զբոսաշրջության վարչությունն է զբաղվում, դա քաղաքականությամբ է, իբր, բացատրվում:

Շուշին ազատագրելուց հետո մարդիկ չկարողացան վերահսկել իրավիճակը, այսինքն՝ էն գլխից ծրագիր չի եղել, որ Շուշին պետք է ազատագրելուց հետո պահել, Շուշվա մեծ մասն այդպես ավերվեց, շենքերի վերեւի մասերը չկոնսերվացրին, խիստ եղանակը, անձրեւներն ու ձյունը շենքերը քայքայեցին»:

«Շրջանի վարչակազմի ղեկավար» հասկացությունը, ըստ թանգարանի տնօրեն ու շուշեցի Աշոտ Հարությունյանի, ֆեոդալիզմի մնացուկ է. Շուշին ունի քաղաքապետ, մի քանի գյուղերի տարածքով նաեւ՝ շրջանի վարչակազմի ղեկավար.« Ես այսպես եմ մտածում. քաղաքապետ եթե կա՝ ընտրովի մարմինը պետք է որոշի, իսկ վարչակազմի ղեկավար, տեղակալ եւ այլն՝ ավելորդ պաշտոններ են: Անձի մասին չեմ խոսում, այլ՝ պաշտոնի: Եթե այդ պաշտոնը կա ու չի կարողանում ստեղծել քաղաք-գյուղ կապը, էլ ո՞ւմ է պետք այդպիսի պաշտոնը: Յոթ գյուղ ունի Շուշին՝ Քարինտակ, Լիսագոր, Հին Շեն, Մեծ Շեն, Եղծահող, Քիսավան, որոնցից ոչ մեկն իր հետ կապված չէ, արտադրանքը տանում, Ստեփանակերտում են վաճառում, շուկա չկա, իսկ Շուշին երեք շուկա է ունեցել: Իսկ հիմա մարդիկ առեւտուր են անում, ամբողջը խանութ են, նույնիսկ Հայաստանից եկածի ապրանքը էժան առնում են, հետո դնում-խանութում շատ թանկ վաճառում են: Ինչ վատ է, դա են սովորում: Նոր շուկա սարքել են, պատրաստ է, բայց արենդայի փողը կփախցնի հասարակ գյուղացուն: Յոթ գյուղով վարչակազմ են ստեղծո՞ւմ, էդ կառուցվածքն իրեն չի արդարացնում: Վարչակազմի ղեկավարն ընդհանրապես Շուշիի հետ կապ չունի, շուշեցի չէ. կրթված տղա է, բայց չգիտի՝ ի՞նչ բան է Շուշին, չկա այդ ձգտումը՝ Շուշիի փառքը վերականգնելու»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Դերսիմի շրջանի հավատամքների համակարգը

**«Ազգը» արդեն տեղեկացրել է, որ հոկտեմբերի 28-30-ը Երեւանի «Կոնգրես» հյուրանոցի դահլիճում, մասնակցությամբ աշխարհի բազմաթիվ երկրներից ժամանած շուրջ 30 գիտնականների, առաջին անգամ տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Զազա: Ժողովուրդ, պատմություն, լեզու, մշակույթ, ինքնություն» վերտառությամբ: Գիտաժողովի ընթացքում հետաքրքրական զեկուցումով հանդես էր եկել Նադիրի Կունդաշ Ալդատմազը՝ նյութ ունենալով «Դերսիմի շրջանի հավատամքների համակարգը» թեման:**

**Ստորեւ թարգմանաբար քաղվածքներ այդ զեկուցման գրավոր տեքստից, որ տրամադրվել է խմբագրությանը: Ուշագրավ են նմանությունները քրիստոնեականության հետ, հատկապես որոշ ծիսակատարությունների դեպքում:**

«Դերսիմի շրջան» եզրը օգտագործվում է, որովհետեւ հավատամքների տարբեր ձեւերը վերաբերում են ոչ միայն զազաներին, այլեւ կուրմանջերեն խոսող մարդկանց: Զազաերեն խոսողների մեծամասնությունը ապրում է Դերսիմում: Նրանց հավատամքները մեծապես տարբերվում են մյուսներից, եւ ընդհանրապես ամբողջ Թուրքիայի տարածքում գոյություն ունեցող հավատամքներից: Զեկուցումը միտված է բացահայտելու այդ տարբերությունները:

Մահվան դեմ մարդու անզորությունը, անմահության որոնումները ստիպել են մարդկանց ստեղծել որոշակի կանոններ, հավատամքներ, բարոյական նորմեր, սովորություններ եւ նույնիսկ փիլիսոփայական հայացքներ, որոնք կարգավորել են նրանց կյանքը եւ ձեւավորել պատկերը:

Դրանք, անտարակույս, տարբեր են եղել տարբեր համայնքներում, բայց քանի որ այդ համայնքները իրարից անջատ չեն գոյատեւել, ապա դժվար է կամ անհնար մեկընդմիշտ տարանջատել մեկը մյուսից:

Առանձնահատուկ են Դերսիմի շրջանի մարդկանց հավատամքները, որոնք մեծապես տարբերվում են ավանդական մահմեդական հասարակության հավատամքներից եւ ավելի շատ կրում են այդ տարածքի նախկին կրոնների ազդեցությունը:

Դերսիմցիները իրենց ալավիներ են բնորոշում, այսինքն՝ իսկական մահմեդականներ: Բայց, ըստ երեւույթին, նրանք այդ «իսկական մահմեդական» եզրը օգտագործում են վախից դրդված, որովհետեւ չեն ընդունում իսլամի հենասյուներից պարտադիր ամենօրյա հնգակի աղոթքը, ծոմը, պարտադիր բարեգործությունը եւ ուխտագնացությունը: Ավելին, չեն նշում կարեւորագույն երկու տոները՝ Ռամազանը եւ Կուրբան Բայրամը: Տեսականորեն Մուհամմեդին ընդունում են որպես իրենց մարգարեի, բայց Ղուրանի մասին ոչ մի խոսք չեն նշում: Այդ սուրբ գիրքը կարդացվում է մահացող մարդու սնարի մոտ միայն:

Դերսիմցիները ոչ մահմեդական են, ոչ էլ քրիստոնյա: Նրանց հավատամքը տարբեր կրոնների խառնուրդ է: Դերսիմի ալավի քրդերը ունեցել են իրենց ուխտագնացության վայրերը («զիյարեթները»), բայց որովհետեւ դրանք բռնի դատարկվել են եւ դարձել անհասանելի, թուրք ալավիների նմանությամբ նրանք էլ ստեղծել են իրենց «Ջեմ էվիները»՝ այսպես կոչված հավաքատեղիները: Նրանց հեղինակավոր առաջնորդներն են Պիրը եւ Ռայբերը: Հավատամքի գլխավոր ձեւերից են հետեւյալները.

1) «Դես ու դի իմամը» (12 իմամներ): Սգո արարողություն է, որի ընթացքում 12 օր ծոմ պետք է պահել, ջուր չխմել (բայց թեյ կամ մրգահյութ կարելի է), միս չուտել, չսափրվել, չշպարվել եւ չլողանալ:

2) «Խիզիրի» ծոմը տեւում է երեք օր (հունվարին կամ փետրվարին): Երիտասարդ աղջիկներն ու տղաները «Իֆթարի» ժամանակ ջուր չեն խմում այն հավատով, որ երազում ում որ տեսնեն իրենց ջուր տալիս, կդառնա իրենց ամուսինը կամ կինը:

3) «Ղարե չաշեմե մարտի» (մարտի սեւ չորեքշաբթի): Մարտ ամսվա 3-րդ չորեքշաբթի օրը «Զիյարեթի» օր է նշանակված, որի ժամանակ մի անասուն են մորթում, կարագով հաց (նիյազ) մատուցում, մոմ են վառում եւ աղոթում:

4) «Ռոզա մերդու» (մեռելոց): Գերեզմանատուն այցելելու օր աշնանը: Մոմ են վառում, աղոթում եւ կարագով հաց մատուցում: Նաեւ ճաշ են պատրաստում մահացածների հոգու համար (սամիյա մերդու):

5) Արեւի եւ լուսնի պաշտամունքը, որը կապ ունի զրադաշտականության հետ: Արեւածագին եւ արեւմուտքին դերսիմցիները հողն են համբուրում, աղոթք են բարձրաձայնում ի փառաբանումն արեւի եւ լուսնի:

6) «Մոմ յաքմաք» (մոմավառություն): Բոլոր սուրբ վայրերում մոմ են վառում եւ աղոթում: Եթե անձամբ չեն կարող գնալ այդ վայրերը, ապա խնդրում են, որ իրենց փոխարեն ուրիշները վառեն: Մոմը, մեղրը եւ կարագը համարվում են սուրբ առարկաներ:

7) «Ջումաա գեջեսի» (նախաուրբաթյան գիշեր): Հինգշաբթի գիշեր մոմ են վառում եւ տեղադրում շենքի տանիքին: Լվացք անելն ու եղունգ կտրելը համարվում են վաս բախտ կանխատեսող գործողություններ:

8) Թաղման կարգը ամբողջովին տարբեր է մահմեդական ծիսակատարությունից: Մահացածի մարմինը տանը պահում են, կողքին՝ մոմեր վառած: Հավաքվածների արձագանքը երբեմն չափն անցնում է, տեղի են ունենում երեսը ճանկռելու կամ մազերը պոկելու տեսարանները: Մահացությունը չեն կապում Աստծո կամքի հետ:

Թաղումից երկու շաբաթ անց այցելում են գերեզմանը եւ ճաշ մատուցում: Քառասունքին նույնպես:

Սրանք են հիմնականում Դերսիմի շրջանի հավատալիքների ու սովորությունների առանձնահատկությունները:

**Պատրաստեց՝ Հ. Ծ.**

# Ղրղզստանի նոր նախագահը դեմ է «Մանաս» ամերիկյան ռազմաբազային

Ղրղզստանում անցկացված նախագահական ընտրություններով հաղթող ճանաչված, գործող վարչապետ Ալմազբեկ Աթամբաեւը հայտարարել է, որ ինքը դեմ է Բիշքեկի միջազգային օդանավակայանի տարածքում «ինչ-որ ռազմական բազաների» առկայությանը: Հիշեցնենք, որ Բիշքեկի միջազգային «Մանաս» օդանավակայանում տեղակայված է միջազգային հակաահաբեկչական կոալիցիայի ռազմական բազան, որը ապահովում է Աֆղանստանի տարածքում իրականացվող «Անբեկանելի ազատություն» գործողությունը: Հիշյալ բազայի կորիզը կազմում է ամերիկյան օդուժը: «Մեր օդանավակայանը քաղաքացիական է ու պետք է զբաղվի քաղաքացիական գործերով: Տհաճ տպավորություններ ես ստանում, երբ վայրէջք ես կատարում օդանավակայանում, իսկ այնտեղ գտնվում են ռազմական ինքնաթիռներ», հայտարարել է Աթամբաեւը: Նշելով, որ Ղրղզստանը հետայսու էլ կշարունակի հավատարիմ մնալ «միջազգայնորեն ստանձնած իր պարտավորություններին», Ղրղզստանի նորընտիր նախագահը շեշտել է. «Չէինք ցանկանա, որ մեզ երբեւէ հարված հասցներ ԱՄՆ-ին դիմակայող որեւէ երկիր»: «Մանասի» ռազմաբազան, համաձայն ղրղզա-ամերիկյան պայմանավորվածությունների, պետք է պահպանվի մինչեւ 2014-ը:

Այդուհանդերձ Աթամբաեւի այս հայտարարությունները հետաքրքրական են բոլորովին այլ հարթակում: Հիշեցնենք, որ Ղրղզստանը ոչ միայն ԱՊՀ-ի, այլեւ ՀԱՊԿ-ի անդամ է, հետեւաբար՝ Մոսկվայի ազդեցության գոտում գտնվող երկիր: Ավելին հենց գործող վարչապետ, այժմ նախագահ Ալմազբեկ Աթամբաեւը իր երկրի անունից Սանկտ Պետերբուրգում վերջերս ստորագրեց ԱՊՀ-ի տարածքում ազատ տնտեսական գոտու համաձայնագիրը, ինչը վարչապետ Պուտինի նախաձեռնությունն է: «Ազգը» այս կապակցությամբ արդեն իսկ նկատել է, որ վերոհիշյալ համաձայնագիրն, ըստ էության, Պուտինի առաջարկած Եվրասիական միության հիմքերից է, հետեւաբար ստորագրողները անմիջականորեն ներառվում են Եվրասիական միության գոնե թեկնածուների ցուցակում: Իսկ եթե Եվրասիական միությունը Մոսկվայի հոգաբարձությամբ ստեղծվի, ու եթե իրոք կոնկրետ Ղրղզստանը այնտեղ ներառվի, ապա, անշուշտ, «անթույլատրելի» կհամարվի «Մանասում» «Անբեկանելի ազատություն» առաքելության շարունակումը, ինչին Աթամբաեւը փաստորեն այժմվանից փորձում է հասնել:

Այս համատեքստում բավական ուշագրավ են արեւմտյան դիտորդների գնահատականները՝ Ղրղզստանում անցկացված նախագահական ընտրություններին: Այդ գնահատականներն, ընդհանուր առմամբ, բացասական են, ավելին՝ պետքարտուղար Հիլարի Քլինթոնն անձամբ կոչ է արել Ղրղզստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ «հետաքննել ընտրությունների ընթացքում տեղ գտած խախտումները», իհարկե հանուն «անբեկանելի ազատության»:

**Հ. ԱՓՅԱՆ**

**ԴԺՎԱՐ ՈՐՈՇՈՒՄ**

# Հունաստանում կանցկացվի օգնության նոր ծրագրին նվիրված հանրաքվե

## *Եվրոգոտու ղեկավարների արտակարգ հանդիպում*



**Հունաստանի կառավարությունը հավանություն է տվել ֆինանսական օգնության երկրորդ ծրագրին նվիրված հանրաքվե անցկացնելու պահանջին, որով հանդես էր եկել վարչապետ Գեորգիոս Պապանդրեուն: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Որոշված է հանրաքվեն անցկացնել «հնարավորինս շուտ»:**

**Օգնության նոր ծրագիրը ենթադրում է երկրի բյուջեի ծախսերի հերթական կրճատում: Պապանդրեուն կարծում է, որ նման միջոցներ կարող են ձեռնարկվել միայն բնակչության հավանության դեպքում:**

**Մինչեւ օրս ձեռնարկված խնայողության խիստ միջոցները անկարգություններ էին առաջացրել Հունաստանի քաղաքներում:**

**Սպասվում է, որ հանրաքվեի վերաբերյալ խորհրդարանը որոշում կընդունի նոյեմբերի 4-ին: Նույն օրը խորհրդարանում քվեարկության կդրվի կառավարությանը վստահություն հայտնելու հարցը:**

**Եվրոմիությունում արդեն հայտարարել են, որ Հունաստանից ակնկալում են ԵՄ հոկտեմբերյան գագաթաժողովում ստանձնած պարտավորությունների անվերապահ կատարում: Այնտեղ ընդունվել էր 130 մլրդ եվրո օգնության նոր ծրագիր, իսկ մասնավոր բանկերը չեղյալ էին հայտարարել Աթենքի պարտքերի գումարի կեսը:**

**Հունաստանի հանրաքվեի հարցը քննարկման թեմա կդառնա Կաննում «Մեծ քսանյակի» երկրների ղեկավարների հանդիպման օրերին: Հանրության վերջին հարցումները վկայում են, որ Հունաստանի բնակչության 60 տոկոսը դեմ է ԵՄ առաջարկած հակաճգնաժամային ծրագրին:**

**Եվրոգոտու երկրների ղեկավարները երեկ Կաննում արտակարգ հանդիպում են ունեցել Հունաստանի հանրաքվեի կապակցությամբ: Բլումբերգ գործակալությունը հաղորդում է, որ հանդիպմանը մասնակցել են Հունաստանի վարչապետ Գեորգիոս Պապանդրեուն, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, ԵՄ ԿԲ նորընտիր ղեկավար Մարիո Դրագին, ԱՄՀ կարգադրիչ տնօրեն Քրիստին Լագարդը:**

**Ֆրանսիայի եւ Գերմանիայի ղեկավարների ընդունած հայտարարության մեջ ասվում է, որ նրանք լի են վճռականությամբ ապահովելու ԵՄ հոկտեմբերյան գագաթաժողովում համաձայնեցված Հունաստանի փրկության ծրագիրը: Իսկ նախօրեին ԵՄ խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպեյը եւ Եվրոհանձնաժողովի ղեկավար Ժոզե Մանուել Բառոզուն հայտարարել էին, որ հակաճգնաժամային միջոցների փաթեթի հետ կապված համաձայնությունը «լավագույն լուծումը կլիներ Հունաստանի համար»:**

# Իսրայելը կարագացնի բնակարանաշինությունը



**Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն կարգադրել է արագացնել ավանների կառուցումը Այսրհորդանանում եւ Արեւելյան Երուսաղեմում: Ռոյթեր գործակալության տվյալներով, խոսքը 2 հազար հավելյալ բնակարանների մասին է: Կառավարության տվյալ որոշումը Իսրայելի պատասխանն է ՅՈՒՆԵՍԿՕ-ին Պաղեստինի անդամակցության կապակցությամբ:**

**Իսրայելը նաեւ ժամանակավորապես դադարեցրել է երկրում պաղեստինցիների համար հավաքվող հարկերի ու տուրքերի փոխանցումը Պաղեստինյան ինքնավարությանը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, նշելով, որ խոսքը միլիոնավոր դոլարների մասին է:**

**1967-ի պատերազմում Իսրայելի գրաված Այսրհորդանանում եւ Արեւելյան Երուսաղեմում հրեական ավանների կառուցումը 2010-ի սեպտեմբերին պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունների դադարեցման գլխավոր պատճառը դարձավ:**

# Մշակույթ

ՑՈՒՑԱՍՐԱՀ

## Լեմս Ներսիսյանի ստեղծագործությունների ցուցահանդես



Հովհաննես Թումանյանի անվ. տուն-թանգարանում երեկ տեղի ունեցավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ եւ ՌԴ նկարիչներ միության անդամ, Ռուսաստանի Դաշնության կրթության ակադեմիայի ակադեմիկոս, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ գեղարվեստի ֆակուլտետի գեղանկարի ամբիոնի վարիչ **Լեմս Ներսիսյանի** նկարների ցուցահանդեսը: Միջոցառմանը ներկա էին ԲՈՀ-ի նախագահ Արսյուշա Ղուկասյանը, արվեստաբան Մերի Երզնկյանը, նկարիչ Լեւոն Կոջոյանը, երաժիշտ Յու. Յուզբաշյանը եւ այլոք: Ցուցահանդեսին ներկայացված էին շուրջ 65 կտավ: Բացման խոսքով հանդես եկավ ԲՈՀ-ի նախագահ **Արսյուշա Ղուկասյանը**, որն ասաց. «Այս դահլիճում մենք շատ ցուցահանդեսներ ենք բացել: Կարծում եմ, հասարակությունը մեծ բավականություն կստանա դիտելով այս ցուցահանդեսը: Նկարներ, որտեղ առկա է ջերմություն, ամբողջ հայկական բնությունը: Սա նկարչի եւս մեկ քայլն է արվեստի բնագավառում եւ շնորհավորում եմ Լեմս Ներսիսյանին եւ Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանին»: Արվեստաբան **Մերի Երզնկյանը** հավելեց. «Պրոֆեսիոնալ արվեստում իմպրեսիոնիզմը, որպես ուղղություն, իրեն արդարացրել է: Լ. Ներսիսյանը այդ ուղղության երկրպագուն է եւ շատ բան է վերցրել այդ ուղղությունից՝ անմիջական ու ակնթարթի տպավորություն, գունային հոսող ընթացք: Լինելով լեռնագնաց, հնարավոր չէ, որ բնության մաքրությունը իր մեջ չզգար: Շատ պարզ, գրագետ, պոետիկ եւ քնարական խոսք է ասում նա գեղանկարչության միջոցով»:

«Ազգ»-ը զրուցեց նաեւ ՀՊՄՀ-ի դասախոս **Արթուր Բաղդասարյանի** հետ. «Այն մարդկային բարությունը, որ ճառագում է Լ. Ներսիսյան մարդուց, այդ նույն բարությունը ճառագում է կտավներից: Նրա կտավները հավերժացրել են մեր բնության այն գոհարները, որոնց մարդը կարող է հանդիպել հայկական լեռնաշխարհում, բայց երբեմն կարող է չնկատել»:

«Գեղեցիկ ստեղծագործությունը մեկնաբանության կարիք չի զգում», Օգյուստ Ռոդենի այս տողերն առանց վերապահության կարելի է վերագրել նաեւ Լեմս Ներսիսյանի ստեղծագործություններին: Նա իր պոետիկ էությամբ եւ գունանկարչական տաղանդով նորովի է բացահայտել մեզ շրջապատող բնության գեղեցկությունը եւ այն եզակի նկարիչներց է, ովքեր մեր օրերում շարունակում են ստեղծել իրենց «հրաշք աշխարհը», շարունակում են պատկերել բնության անսպառ գեղեցկությունը՝ հստակ համոզված լինելով, որ միայն գեղարվեստական միջավայրն է ի զորու հասարակությանը դուրս բերել իր հայեցողական վիճակից:

Այն հարցին, թե ինչու է այդքան շատ ծաղիկներ պատկերում, նկարիչը պատասխանեց, թե իր նախընտրությունը բխում է մարդասիրությունից, եւ ավելացրեց. «Ծաղիկը տիեզերական կառույց է... Ծաղիկները բնորոշում են մարդկանց բնավորությունը...»:

Լ. Ներսիսյանը ծնվել է Շիրակի մարզի Այգաբաց գյուղում: 1992-ին Մոսկվայում պաշտպանելով դոկտորի գիտական աստիճան՝ նա Հայաստանում հիմք դրեց գեղարվեստական մանկավարժության նոր դպրոցի ձեւավորմանը: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է կերպարվեստի դասընթացի չափորոշիչների եւ ուսումնական ծրագրերի նոր համակարգ: Նախագահել է Դելփյան խաղերը Կիեւում եւ Աստանայում: Բազմիցս մասնակցել է միջազգային եւ հանրապետական ցուցահանդեսների Մոսկվայում, Մինսկում, Իրկուտսկում, Արաբական Էմիրություններում, Լիբանանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հայաստանում եւ այլուր: Հեղինակ է մոտ 1500 կտավների, որոնցից շատերը պահպանվում են Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իրանի, Գերմանիայի, Հայաստանի մասնավոր հավաքածուներում: Հեղինակ է 70 գիտական աշխատանքների:

Հոկտեմբերի 22-ին Լ. Ներսիսյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը բացվեց նաեւ Գյումրիի Ասլամազյան քույրերի ցուցասրահում: Հավելենք, որ ցուցահանդեսի առթիվ տպագրվել է ալբոմ, որում ներառված են հարյուրից ավելի նկարներ եւ բազում նկարիչների, մշակութաբանների խոհերը Լ. Ներսիսյանի մասին:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Հայկական երաժշտական համաժողով

ՀՀ անկախության 20-ամյակին է նվիրված հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 4-ը անցկացվող Հայկական երաժշտական համաժողովը: ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ փառատոնի օրերին կհնչեն հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները: Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հոկտեմբերի 27-ին խմբերգային երաժշտությամբ մեկնարկեց փառատոնը: Նույն օրը հնչեցին Դ. Սաքոյանի «Վարք հիմարաց» օպերայի (ըստ Հովհ. Թումանյանի հեքիաթների) համերգային կատարումները:

Հաջորդ օրերին հնչեց կամերային, վոկալ եւ գործիքային երաժշտություն: Նոյեմբերի 4-ը նվիրված է սիմֆոնիկ երաժշտությանը: Փառատոնը կեզրափակվի ստեղծագործական քննարկումով՝ Ա. Խաչատրյան տուն-թանգարանում: Սիմֆոնիկ երաժշտության երեկոյին հանդես կգան Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյան) եւ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյան) համատեղ ելույթով:

Փառատոնի օրերին հնչել եւ հնչելու են Վահրամ Բաբայանի, Երվանդ Երկանյանի, Սուրեն Զաքարյանի, Արմենուհի Կարապետյանի, Էդուարդ Միրզոյանի, Լեւոն Չաուշյանի, Կոնստանտին Պետրոսյանի, Ռուբեն Սարգսյանի, Դավիթ Սաքոյանի, Մարտին Վարդազարյանի ստեղծագործությունները:

Ս. Ս.

## «Կրթության ոլորտը հեղափոխականություն չի հանդուրժում», ասում է կրթության գլխավոր պետական տեսուչը

Կառավարությունը այս տարվա հունիսի 7-ի որոշմամբ, կրթության պետական տեսչության կանոնադրության մեջ կատարեց փոփոխություն, որ կրթության պետական տեսչությունը կրթության եւ գիտության նախարարության առանձնացված ստորաբաժանումն է, որն իրականացնում է որոշ գործառույթներ եւ կիրառում պատասխանատվության միջոցներ կրթության բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: Անցել է արդեն չորս ամիս այդ որոշումից եւ «**Ազգը**» փորձեց ՀՀ կրթության պետական տեսչության պետ **Արամ Կարապետյանից** տեղեկանալ, թե ի՞նչ նոր փոփոխություններ են կատարվել տեսչությունում եւ այս նոր օրենքով հնարավոր կլինի՞ գոնե մասամբ վերացնել կրթության ոլորտի խութերը:

ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչը պարզաբանեց. «Այս նոր փոփոխությունով իրականացվելու է կրթության ոլորտում ամբողջ օրենսդրական դաշտի պահպանման վերահսկողությունը եւ այն վերապահվում է մեր տեսչությանը: Ասեմ, որ միջնակարգ մասնագիտական կրթությունն ու բուհական համակարգի տեսչավորումն ու օրենսդրության պահպանման ստուգումը դուրս էին մնացել գործառույթներից, այս տարի ԿԳ նախարարությունը օրենսդրական նախաձեռնությամբ հանդես կգա, որպեսզի այդ ոլորտները նույնպես ընդգրկվեն մեր վերահսկողության դաշտում: Նախագիծը այժմ գտնվում է կառավարությունում եւ այն շուտով կուղարկվի Ազգային ժողով: Այսինքն, նախադպրոցական ուսումնական հաստատությունից մինչեւ բուհական համակարգ օրենսդրական դաշտի ամբողջ պահպանումը լինելու է Կրթության պետական տեսչության իրավասության շրջանակներում: Այդ վերահսկողությունը մենք ենք իրականացնելու»:



ՀՀ կրթության պետական տեսչությունը գտնվում է Կոմիտաս 27 հասցեում եւ արդեն գործում է թեժ գիծ հեռախոսահամարը՝ 20-30-54, որով հնարավոր կլինի տեղեկացնել յուրաքանչյուր օրինախախտում, ինչին կտրվի հստակ լուծում, հավաստիացնում էր պրն Կարապետյանը: Իսկ թե ինչ են ցույց տվել երեք մարզերում կրթության ստորաբաժանումներում ստուգումները, գրանցվե՞լ են խախտումներ հարցին, ասաց.

- Ավարտել ենք Կոտայքի մարզպետարանի կրթության ստորաբաժանումներում ստուգումները, այս պահին աշխատանքներ են տարվում Արագածոտնի մարզպետարանում, այնուհետեւ կլինենք Շիրակի ու Լոռի մարզերում: Խախտումները հիմնականում բնորոշ են բոլոր մարզպետարաններին՝ հավելագրումներ: Այսինքն, նույն աշակերտը մի քանի դպրոցում կարող է հրամանագրվել: (Դա նշանակում է, որ յուրաքանչյուր աշակերտի համար պետության կողմից սահմանված տարեկան 119.000 դրամը հնարավոր է լինում կրկնապատկել ու եռապատկել տնօրենների թողտվությամբ - Մ. Մ.): Խախտումներ են գրանցվել դպրոց ընդունելու կարգի, տարիքային սահմանված չափը չպահելու՝ հատկապես առաջին դասարանցիների դեպքում: Քիչ չեն խախտումները, հատկապես 10-11-րդ դասարաններում բացակայության մեծ թվի հետ կապված ու հայտնաբերվել են մասսայական բացակայություններ: Այդ բոլոր փաստերը արձանագրվել են, տեղյակ է պահվել լիազոր մարմիններին, որոնք որոշակի ժամանակից հետո պատասխանում են, թե ի՞նչ է կատարվել եւ որից հետո իրականացնում ենք տեղում դիտարկում՝ ստուգելու վերացվե՞լ են թերությունները եւ տրվե՞լ է արդյոք տույժ մեղավորներին»:

Տեղեկացնենք, որ կառավարության որոշմամբ տեսչության տարածքային չորս մարմիններ են բացվել Վանաձորում, Ղափանում, Գավառում եւ Գյումրիում: Իսկ նախկինում տեսչությունում գործող չորս բաժինների փոխարեն այսօր գործում են երեք բաժիններ՝ հանրակրթության տեսչության, մասնագիտական կրթության եւ վերլուծության ու գնահատման: Իսկ թե ինչ ասել է կրթության որակի ստուգում եւ ինչպե՞ս է դա արվելու պրն. Կարապետյանը պարզաբանեց. «Առաջին անգամ Արմավիրի մարզում իրականացնելու ենք կրթության որակի ստուգում: Մինչ այդ մենք վերահսկել ենք օրենսդրական պահանջների կատարումը՝ ուսումնական հաստատությունների կողմից, մեր աշխատանքային ծրագրում փոփոխություն ենք մտցնում եւ ավելացնում ենք կրթության պետական ծրագրերի յուրացման, իրականացման գործընթացի վերահսկողությունը: Այս գործառույթը օրենքով սահմանված է եւ տեսչական աշխատանքներին հրավիրվում են նաեւ հանրապետությունում տվյալ առարկաների լավագույն մասնագետներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, որոնք զբաղվում են կրթության խնդիրներով»:

**- Պրն Կարապետյան, այսօր շատ է խոսվում կրթական մակարդակի անկման, կրթության որակի ցածր ցուցանիշների մասին: Իհարկե, հարցս չի վերաբերում այն լավագույն աշակերտներին, որոնք հանրապետական ու միջազգային օլիմպիադաներում մշտապես մրցանակային տեղեր են գրավում, այլ նրանց, ովքեր դպրոց կամ բուհ են հաճախում, երբ ուզում են, կամ էլ ժամանցի ու դիպլոմի համար: Այս հարցի շուրջը ի՞նչ լուծումներ ունի տեսչությունը:**

- Այսօր մենք խնդիր ունենք կրթական միջին մակարդակը բարձրացնելու: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ունենք կրթության միջին մակարդակի անկում: Լուրջ խնդիր ունենք նաեւ մանկավարժական կադրերի պատրաստման հարցում: Ունեցել ենք շատ լավ մանկավարժներ, սակայն սերնդափոխության ընթացքում շատ բան կորցրինք: Այսօր մեր դպրոցների շրջանավարտներից ոչ լավագույններն են գնում մանկավարժական բուհ: Լավագույնները կա՛մ տնտեսագիտության, կա՛մ իրավաբանության եւ կամ մոդայիկ դարձած մասնագիտություններն են ընտրում: Իսկ ցածր գնահատականներ հավաքածները, որպեսզի դուրս չմնան այս կամ այն բուհից, ստիպված գնում են մանկավարժական, բայց նրանք միեւնույն է՝ մանկավարժ չեն դառնում:

Այդ հարցերի լուծումը միայն դպրոցի վրա թողնելը ճիշտ չէ: Պարզապես պետք է սեր արթնացնել շրջանավարտների շրջանում, նրանց նախապատրաստել եւ ուղղորդել, որում մեծ դեր ունեն դպրոցի մանկավարժական խորհուրդը, անկախ նրանից, թե ինչ տնօրեն է ընտրվել: Կրթությունն այն ոլորտն է, որ հեղափոխականություն չի հանդուրժում: Տեսեք, թե ինչ բերեց դասագրքերի հաճախակի փոփոխությունը, որն էլ խաթարեց ուսումնական պրոցեսը դպրոցներում: Իդեալական դասագիրք, իհարկե, չի կարող լինել, սակայն դա չի նշանակում, որ ամեն տարի պետք է դասագրքերը, ուսումնական ծրագրերը փոխել: Այդ ամենը պետք է արվի աստիճանաբար եւ շատ զգուշորեն՝ կրթության հանդեպ հետաքրքրությունը չխաթարելով: Տեսեք, թե մեր պոեզիայի նկատմամբ ինչպիսի հետաքրքրություն առաջացավ ասմունքի փառատոնով, եւ անգամ տղաները ոգեւորված ասմունքում էին, մի բան, որը քիչ հավանական ու ինչ-որ տեղ «պասիվ» չէր բերում տղաներին՝ ըստ իրենց: Նշանակում է, եթե լուրջ մտածենք, ապա մեր կրթական մակարդակը կարող ենք կտրուկ բարձրացնել եւ ունենալ լավագույն մասնագետներ բոլոր ոլորտներից:

Ահա այս կարծիքը հայտնեց Արամ Կարապետյանը՝ մասնագիտությամբ բանասեր, մանկավարժական գիտությունների թեկնածու: Մի մարդ, որի կրթական ճանապարհը մանկավարժականի է փոխվել ուսուցչից ուսմասվար, տնօրեն, ժողկրթբաժվար, Լոռու մարզի կրթության տեսչության պետ, ԿԳ նախարարության հանրակրթության վարչության պետ եւ այժմ՝ ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչ:

Հարցազրույցը վարեց
ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆԸ

# Մարզական

## Սամվել Խաչատրյան. «Մեդալներ անպայման կնվաճենք, որոնք նաեւ օլիմպիական ուղեգրեր կապահովեն»

***Նոյեմբերի 5-ին Փարիզում մեկնարկում է ծանրամարտի աշխարհի հերթական առաջնությունը: Բացի առաջնության մեդալներից, ծանրորդները կվիճարկեն 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը: Հայ ծանրորդների ելույթներով է պայմանավորված, թե Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականներն ինչ թվաքանակով կներկայանան օլիմպիական խաղերին: Վերջին տարիներին մեր ծանրորդները մարզասերներին մշտապես ուրախացրել են իրենց ծանրակշիռ հաղթանակներով ու մրցաշարերից տուն են վերադարձել մեդալների հարուստ ավարով: Իսկ աշխարհի վերջին 2 առաջնություններում անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ մեր ծանրորդներից Նազիկ Ավդալյանն ու Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանը հռչակվել են աշխարհի չեմպիոններ: Հուսանք, որ Փարիզում էլ մեր ծանրորդները կարդարացնեն սպասելիքները ու տուն կվերադառնան մեդալներով եւ օլիմպիական ուղեգրերով: Այս հարցում լավատես է նաեւ ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանը, որի հետ հարցազրույցը ներկայացնում ենք ընթերցողներին:***




**- Պրն Խաչատրյան, Հայաստանի հավաքականի կազմում ովքե՞ր են Փարիզում դուրս գալու մրցահարթակ եւ ինչպիսի՞ն է առաջադրանքը:**

- Մենք Փարիզ ենք մեկնելու 10 ծանրորդով: Կանանց մրցապայքարին կմասնակցեն Իզաբելա Յայլյանը (53 կգ), Մելինե Դալուզյանը (69 կգ) եւ գերծանրքաշայիններ Հռիփսիմե Խուրշուդյանն ու Նաիրա Հարությունյանը: Տղամարդկանց մրցահարթակ դուրս կգան 69 կգ քաշայիններ Վանիկ Ավետիսյանն ու Սամվել Գրիգորյանը, աշխարհի չեմպիոն Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանն ու Առաքել Միրզոյանը (երկուսն էլ՝ 77 կգ), գերծանրքաշայիններ Ռուբեն Ալեքսանյանն ու Հայկ Հակոբյանը: Տղամարդկանց հավաքականը գլխավորում է Պողոս Պողոսյանը, կանանցը՝ Արտաշես Ներսիսյանը, որոնց կօգնեն Ալեքսան Կարապետյանը, Արման Ղազարյանն ու Փաշիկ Ալավերդյանը:

Ինչպես հայտնի է, աշխարհի այս առաջնությունն էլ նախորդի նման վարկանիշային է, ուստի մեդալներից զատ շատ է կարեւորվում օլիմպիական ուղեգրերի նվաճումը: Անցած տարվա աշխարհի առաջնության արդյունքներով կանայք արդեն հավակնում են առավելագույն 4 ուղեգրերին, տղամարդիկ էլ խաղարկվող 6 ուղեգրերից 4-ն են ապահովել: Փարիզում պետք է աշխատենք, որ տղամարդիկ գոնե 5 ուղեգիր նվաճեն, կանայք էլ կարողանան պահպանել ձեռքբերածը:

**- Առաջադրանքը կատարելու համար թիմային հաշվարկով ո՞րն տեղերն է անհրաժեշտ զբաղեցնել:**

- Նախորդ առաջնության արդյունքներով կանանց հավաքականը 9-րդ տեղում է: Եթե հաջողվի Փարիզում տեղ զբաղեցնել լավագույն տասնյակում, ապա 4 ուղեգիր կնվաճենք: Տղամարդկանց հավաքականը 5 ուղեգիր նվաճելու համար պետք է գրավի մինչեւ 12-րդ տեղը: Ներկայումս մեր հավաքականը 17-րդ տեղում է: Դա պայմանավորված էր Անթալիայում կայացած աշխարհի առաջնությունում մեր երկու ծանրորդների ձախողմամբ, որոնք 0 ստացան, ու Արա Խաչատրյանի չարաբաստիկ վնասվածքով: Փաստորեն, մենք մնացած 3 ծանրորդների արդյունքներով 102 երկրների մեջ կարողացանք գրավել 17-րդ տեղը, ինչը վատ արդյունք չէ:

**- Ինչպե՞ս է անցել մեր ծանրորդների նախապատրաստությունը, պատրա՞ստ են նրանք ծանր կգ-ներ բարձրացնելու:**

- Մեր ծանրորդներն ամենայն լրջությամբ են նախապատրաստվել աշխարհի առաջիկա առաջնությանը: Տղամարդիկ ուսումնամարզական վերջին հավաքն անցկացնում են մերձմոսկովյան Պոդոլսկ քաղաքի օլիմպիական մարզաբազայում, որտեղից էլ կուղեւորվեն Փարիզ: Առաքել Միրզոյանն իր հոր գլխավորությամբ մարզվում է Հայաստանում: Կանայք այս պահին ուսումնամարզական հավաք են անցկացնում Աբովյանում: Կարող եմ հավաստիացնել, որ մեր ծանրորդները գերազանց մարզավիճակում են եւ պատրաստ են մեդալներ նվաճելու: Դուք ինքներդ Հանրային հեռուստատեսության ուղիղ եթերում կարող եք հետեւել մեր ծանրորդների ելույթներին: Սպասվում է, որ Փարիզ կժամանի նաեւ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը, ինչը լրացուցիչ լիցք կհաղորդի մեր ծանրորդներին:

Անձամբ Գագիկ Ծառուկյանի, սպորտի նախարարության սպորտային բժշկության կենտրոնի ջանքերով մեր ծանրորդների նախապատրաստության համար ստեղծվել էին անհրաժեշտ բոլոր պայմանները՝ բարձրակարգ սնունդ, որակյալ վերականգնիչներ, մշտական բժշկական հետազոտություններ եւ այլն: Այնպես որ Փարիզում էլ մեր ծանրորդներից բարձր արդյունքներ ենք ակնկալում: Սպասում ենք մեդալների, որոնք նաեւ օլիմպիական ուղեգրեր կապահովեն:

**- Տիգրան Մարտիրոսյանը կարո՞ղ է այս տարի էլ նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը:**

- Չեմ կարող նախապես ոչինչ ասել, բայց հայ ժողովրդին խոստանում եմ, որ այս առաջնությունում էլ մեր ծանրորդները ձեզ կուրախացնեն նվաճած մեդալներով:




**- Վերջում ոչ հաճելի լուրի մասին: Վերջերս տեղեկատվություն տարածվեց, որ արգելված խթանիչների օգտագործման համար 4 տարով որակազրկվել են Գեւորգ Պողոսյանն ու Էլեն Գրիգորյանը: Ինչպե՞ս կմեկնաբանեք դա:**

- Կանոնակարգի համաձայն, մրցումների ավարտից 40 օրվա ընթացքում պետք է ստուգվեն մարզիկներից վերցված անալիզները ու պատասխան տան: Մենք հոկտեմբերին ենք ստացել դոպինգ ստուգման դրական պատասխանը Քյոլնի լաբորատորիայից: Փաստորեն, մեզ միայն 6 ամիս հետո են տեղեկացրել A նմուշի արդյունքների մասին: Ամբողջ աշխարհում 10 ծանրորդների դոպինգ ստուգումը դրական արդյունք է տվել ու մենք էլ մյուս ֆեդերացիաների պես անմիջապես բողոքարկել ենք որոշումը՝ պահանջելով նաեւ B նմուշի ստուգում: Հակադոպինգային համաշխարհային կազմակերպությունը խոստացել է մինչեւ դեկտեմբերի 10-ը ստուգել B նմուշը ու պատասխան տալ: Մենք խնդրել ենք, որպեսզի B նմուշի բացման ժամանակ մեր ներկայացուցիչը ներկա գտնվի ստուգման արարողությանը:

Նշեմ, որ վերջին 5 տարում Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիան դոպինգի հարցում ոչ մի խնդիր չի ունեցել: ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանն էլ բոլոր ֆեդերացիաներին զգուշացրել է, որ խստորեն հետեւեն մարզիկներին ու անցանկալի դեպքեր չգրանցվեն, այլապես մեղավորները կպատժվեն: Ես բացառում եմ, որ նշված ծանրորդներն առանց մարզչի եւ բժշկի գիտությամբ ինչ-որ դեղեր ընդունած լինեն: Նրանց օրգանիզմում այնպիսի խթանիչ է հայտնաբերվել, որը միայն այս տարի է ընդգրկվել արգելված դեղամիջոցների շարքը: Օրինակ կան դեղեր՝ սպազմալգոնը, անալգինը, լեւոմիցիտինը եւ այլն, որոնք միայն այս տարի են ընդգրկվել արգելված խթանիչների ցանկում: Մենք այժմ օգտագործում ենք բարձրորակ վերականգնիչներ, որոնք թույլատրվում են:

Եթե Աստված ոչ անի, B նմուշն էլ դրական արդյունք տա, ապա խոստանում եմ, որ մեր ծանրորդներն առավելագույնը կորակազրկվեն 2 տարով, քանի որ առաջին անգամ են դոպինգ օգտագործել, այն էլ միայն այս տարի արգելվածների ցանկում ընդգրկված խթանիչ: Նաեւ ցանկանում եմ ընդգծել, որ մեր ծանրորդների որակազրկումը դեռեւս պաշտոնապես հաստատված չէ, քանի որ միջազգային ֆեդերացիայի կայքում նրանց ցույց տված արդյունքները չեղյալ չեն համարվել: Իսկ ահա 69 կգ քաշային կարգի 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած ծանրորդների որակազրկումը հաստատված է, ուստի ՌԴ-ի կազմում հանդես եկած Արմեն Ղազարյանին պետք է հանձնվի արծաթե մեդալը: Եկեք մի փոքր էլ համբերենք ու սպասենք B նմուշի ստուգման պատասխանին:

***ԵՎՐՈՊԱՅԻ ԹԻՄԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ***

## Շախմատային մրցավեճը մեկնարկում է

**Այսօր Հունաստանի Պորտո Կարաս քաղաքում մեկնարկում է շախմատի Եվրոպայի թիմային առաջնությունը: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն տղամարդկանց 38 եւ կանանց 28 թիմեր: Մրցաշարում կխաղացվի 9 տուր առանց հանգստյան օրվա: Մրցախաղերը կսկսվեն Երեւանի ժամանակով ժամը 17-ին:**

**Յուրաքանչյուր հավաքականում թույլատրվում է հայտավորել 5 շախմատիստի, որոնցից 4-ը կմասնակցեն տվյալ մրցախաղին: Հայաստանի տղամարդկանց հավաքականը Եվրոպայի առաջնությանը կներկայանա նույն կազմով, որով դարձել էր աշխարհի թիմային առաջնության հաղթող: Հուսանք, որ Հունաստանում էլ հայ շախմատիստները չեմպիոն կհռչակվեն: Մեր թիմի կազմում հանդես կգան Լեւոն Արոնյանը, Սերգեյ Մովսիսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը եւ Ռոբերտ Հովհաննիսյանը: Հավաքականի մարզիչն է Արշակ Պետրոսյանը:**

**Կանանց հավաքականի կազմում մրցավեճի կբռնվեն Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, Մարիա Կուրսովան եւ Նելլի Աղինյանը: Մարզիչն է Արթուր Չիբուխչյանը:**

## ՀՖՖ նախագահը կօգնի Կարապետ Միքայելյանին

**ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը հեռախոսազրույց է ունեցել ՀՀ հավաքականի նախկին ֆուտբոլիստ Կարապետ Միքայելյանի հետ ու խոստացել է ֆինանսական օգնություն ցուցաբերել վերջինիս սրտի թանկարժեք վիրահատությունն իրականացնելու համար:**

**Կարապետ Միքայելյանը տեղեկացրել է, որ շուտով հետազոտության է ենթարկվելու ու հերթագրվելու է վիրահատության համար: Նա նաեւ նշել է, որ «Կռիլյա Սովետովից», որում նախկինում խաղացել է, արդեն իր հաշվին ուղարկել են խոստացված 84 հազար ռուբլին:**

## Աբրահամի քաշի հարցում կարծիքները տարբեր են

Միջին քաշային կարգում պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամի պրոմոութեր Վիլֆրիդ Զաուերլանդը եւ մարզիչ Ուլի Վեգները տարբեր կարծիքի են հայ բռնցքամարտիկի քաշային կարգի վերաբերյալ: Զաուերլանդը գտնում է, որ Աբրահամը պետք է վերադառնա միջինքաշային կարգ (72,5 կգ), իսկ Վեգների կարծիքով՝ Արթուրը պետք է տեղափոխվի կիսածանրքաշային կարգ (79,4 կգ):

Ինչ վերաբերում է Արթուր Աբրահամին, ապա նա օրերս հայտարարել էր, որ մտադիր է հունվարին քաշը նվազեցնել մինչեւ 75 կգ-ը ու ռինգ դուրս գալ: Արթուրի համար անհաջող էր 2-րդ միջինքաշային կարգ (76,2 կգ) տեղափոխվելը: Այդ կարգում նա մասնակցեց Super Six մրցաշարին: Անցկացված 4 մենամարտերից 3-ում Արթուրը պարտվեց:

## «Բարսելոնն» ու «Միլանը» մտան հաջորդ փուլ



**Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 4-րդ տուրի հանդիպումներից հետո իսպանական «Բարսելոնն» ու իտալական «Միլանը» ժամկետից շուտ 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճեցին: «Բարսելոնը» Պրահայում 4-0 հաշվով ջախջախեց «Վիկտորիային»: Այդ խաղում մի քանի ռեկորդ սահմանվեց: Լիոնել Մեսին հեթ տրիկի հեղինակ դառնալով, «Բարսելոնի» կազմում 200-րդ գոլը խփեց: Թիմի դարպասապահ Վիկտոր Վալդեսն էլ չեմպիոնների լիգայում 877 րոպե շարունակ դարպասը պահեց անառիկ՝ գերազանցելով Միգել Ռեյնայի նախկին ցուցանիշը, որը 1972/73-ին դարպասն անառիկ էր պահել 824 րոպե: «Վիկտորիայի» հետ հանդիպումը «Բարսելոնի» գլխավոր մարզչի պաշտոնում Խոսեպ Գվարդիոլայի հոբելյանական՝ 200-րդ խաղն էր:**

**H խմբում 2-րդ ուղեգիրը բաժին հասավ «Միլանին», որը Մինսկում ոչ-ոքի խաղաց ԲԱՏԷ-ի հետ: 22-րդ րոպեին Իբրահիմովիչը բացեց հաշիվը, 2-րդ խաղակեսում Բրեսանը 11 մ հարվածով վերականգնեց հավասարակշռությունը:**

**Դոնեցկի «Շախտյորը» շարունակում է անհաջող ելույթները G խմբում: Ուկրաինական ակումբը Սանկտ Պետերբուրգում 0-1 հաշվով զիջեց «Զենիթին»: Իսկ ահա Կիպրոսի «Ապոելը» շարունակում է զարմացնել իր հաջող մրցելույթներով: Հերթական խաղում «Ապոելը» 2-1 հաշվով հաղթեց «Պորտոյին», ընդ որում հաղթական գնդակը խփեց վերջին րոպեին: «Ապոելը» 8 միավորով գլխավորում է G խմբի աղյուսակը, իսկ «Շախտյորը» 2 միավորով հետնապահն է:**

**E խմբում ուղեգրի նվաճմանը մոտ է «Չելսին», որը հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղաց բելգիական «Գենկի» հետ: «Չելսին» 8 միավորով գլխավորում է աղյուսակը: 6 միավորով 2-րդ տեղում «Բայերն» է, որը հյուրընկալվելիս 1-3 հաշվով զիջեց «Վալենսիային»:**

**F խմբում «Արսենալը» գոլազուրկ ոչ-ոքի խաղալով «Մարսելի» հետ, 8 միավորով գլխավորում է աղյուսակը: Առաջին հաղթանակը տոնեց Դորտմունդի «Բորուսիան»՝ 1-0 հաշվով պարտության մատնելով «Օլիմպիակոսին»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2011 թվականի ծրագրերի ցանկ

**Ջրամատակարարման ծրագրեր/ ավարտված**

ՀՀ Տավուշ/ Այգեհովիտ-Վազաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի դոմդակայանի կառուցում, ծրագրի արժեքը 19,800,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Ստեփանակերտ/ Ստեփանակերտ քաղաքի ջրամատակարարման համակարգի կառուցում (10-րդ գոտի), արժեքը՝ 584,050,539 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտակերտ/ Մարտակերտ քաղաքի ջրամատակարարման համակարգի նախագիծ, արժեքը՝ 18,662,400 ՀՀ դրամ:

ԼՂՀ Հադրութ/ Հադրութ քաղաքի ջրամատակարարման համակարգի նախագիծ, արժեքը՝ 12,580,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Ասկերան/ Նորագյուղի ջրամատակարարման համակարգի կառուցումարժեքը՝ 236,981,607 ՀՀ դրամ:

ԼՂՀ Ասկերան/ Ավետարանոց գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցում, արժեքը՝ 153,570,452 ՀՀ դրամ:

ԼՂՀ Ասկերան/ Այգեստան գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագիծ, արժեքը՝ 5,750,000 ՀՀ դրամ:

**Ջրամատակարարման ծրագրեր/ ընթացիկ**

ՀՀ Տավուշ/ Այգեհովիտ-Վազաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 70,175,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Ստեփանակերտ/ Ստեփանակերտ քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում (11-րդ գոտի), արժեքը՝ 334,089,109 ՀՀ դրամ:

ԼՂՀ Շուշի/ Շուշի քաղաքի ջրամատակարարման համակարգի կառուցում (2-րդ գոտի), արժեքը՝ 240,444,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Շուշի/ Շուշի քաղաքի ջրամատակարարման համակարգի կառուցում (1-ին գոտի), արժեքը՝ 164,656,986 ՀՀ դրամ:

ԼՂՀ Շուշի/ Քարին Տակ գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 157,823,098 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտակերտ/ Ջափար գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցում, արժեքը՝ 25,410,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտունի/ Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 598,654,497 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտունի/ Կարմիր Շուկա գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 241,457,270 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտակերտ/ Վանք գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 28,842,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտունի/ Սարգսաշեն գյուղի նոր ջրամատարի կառուցում եւ ներքին ցանցի վերակառուցում, արժեքը՝ 53,000,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Հադրութ/ Ակնաղբյուր գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագիծ, արժեքը՝ 3,100,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Հադրութ/ Հարթաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 30,419,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Հադրութ/ Տող գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 102,450,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Քաշաթաղ/ Բերձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 190,809,904 ՀՀ դրամ:

ԼՂՀ Հադրութ/ Ուխտաձոր գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում, արժեքը՝ 22,966,000 ՀՀ դրամ:

**Ճանապարհների կառուցում/ ավարտված**

ԼՂՀ Շուշի/ Շուշի քաղաքի Պռոշյան փողոցի վերակառուցում, արժեքը՝ 113,199,336 ՀՀ դրամ:

ԼՂՀ Շուշի/ Շուշի քաղաքի Հախումյան եւ Ղազանչեցոց փողոցների վերակառուցում, արժեքը՝ 427,607,083 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտունի/ Հաղորդի գյուղի 5.2կմ ճանապարհի վերակառուցում, արժեքը՝ 28,807,000 ՀՀ դրամ:

Մանկապարտեզների կառուցում եւ վերանորոգում/ ավարտված

ՀՀ Լոռի/ Վանաձորի թիվ 30 մանկապարտեզի կահավորում, արժեքը՝ 9,213,000 ՀՀ դրամ:

ԼՂՀ Մարտունի/ Ղուզե Ճարտար գյուղի մանկապարտեզի կառուցում, արժեքը՝ 172,965,275 ՀՀ դրամ:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ ՊԸԾՁԲ -03/11**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը ՀՀ ԴԴՊԿՀ , որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ՝ երեք առանձին չափաբաժիններով:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու 1. «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի, «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող՝ 2. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, 3. Էրեբունի և Նուբարաշեն, 4. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանների, 5. ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Մարտունի, 6. ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի Մասիս, 7. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Աբովյան և 8. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքների նստավայրերի վարչական շենքերի ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերումը, շինարարական աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև սույն 09.11.2011 թվականի ժամը 15 00:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ ՊԸԾՁԲ -04/11**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը ՀՀ ԴԴՊԿՀ , որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ՝ երեք առանձին չափաբաժիններով:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Երևան քաղաքի Շենգավիթ և Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանների վարչական շենքերի գազի կարգավորիչների փոխարինման ծառայությունների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև սույն 10.11.2011 թվականի ժամը 1400:

# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ք.Երևան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 21.11.2011թ.-ին, ժ. 12:00-ին տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետևյալ լոտը՝ «Երևանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող արտադրական տարածքը, որի մակերեսն է՝ 3573,1 ք.մ., հողամաս՝ 0,07157 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան փողոց, թիվ 19 շենք: Լոտի մեկնարկային գինը սահմանված է 280.000.000 (երկու հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ առկա սահմանափակումները՝ տարածքի մի մասը վարձակալության պայմանագրերի հիման վրա տրված է վարձակալության: Տարածքի ընդ. մակերեսից 404.0 ք.մ.-ն ընդհանուր օգտագործման է: Լոտի վաճառքը վարձակալության պայմանագրի դադարեցման հիմք չէ: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ և Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաև նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ և աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով նախավճար, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչև 17.11.2011թ. ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդն անցկացվելու է դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման նաև այն դեպքում, երբ աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը, ինչպես նաև հատուցել աճուրդին մասնակցելու հետևանքով նրա կրած վնասները: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչև 18.11.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 12:00-ից մինչև 15:00-ն, այցելել վերը նշված հասցեով և ծանոթանալ լոտի հետ՝ նախապես ստանալով Կազմակերպչի թույլտվությունը: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ և անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երևան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով:


ConverseBank
Բոլորի համար

Ժամկետային ավանդ «Երեւան»



Կոնվերս բանկը սկսում է «ԵՐԵՎԱՆ» նոր ժամկետային ավանդի ակցիան՝ նվիրված Էրեբունի-Երեւանին

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն մինչեւ դեկտեմբերի 31-ը կազմակերպում է նոր տեսակի «ԵՐԵՎԱՆ» ժամկետային ավանդի ընդունման ակցիա՝ նվիրված Էրեբունի-Երեւանին: Ավանդներն ընդունվում են ՀՀ դրամով՝ 12 ամիս ժամկետով եւ 12% տոկոսադրույքով, տոկոսների վճարումը՝ ամեն ամիս, նվազագույն գումարը՝ 200 000 ՀՀ դրամ:

«Երեւան» նոր տեսակի ժամկետային ավանդ ներդնող ավանդատուների միջեւ կանցկացվի խաղարկություն, որի արդյունքում ավանդատուներից հինգ հաջողակները կշահեն 5/հինգ/ գրամանոց 999,9 հարգի ոսկու ձուլակտորներ:

Ակցիայի ընթացքում ավանդատուներին, առանց տարեկան սպասարկման եւ տրամադրման վճարների գանձման, կհատկացվի WOMAN'S CARD /Հայաստանում նախադեպը չունեցող քարտ է՝ նախատեսված միայն կանանց համար/: Առանց տարեկան սպասարկման վճարի գանձման կտրամադրվեն VISA CLASSIC, MASTERCARD STANDART: Իսկ 1 միլիոն դրամ եւ ավելի ավանդ ներդնող ավանդատուներին կտրամադրվի VISA COLD, MASTERCARD GOLD՝ քարտային հաշվի սպասարկման վճարի 50% զեղչով:

Հիշեցնենք, որ Կոնվերս բանկը պարբերաբար իրականացրել է նմանատիպ ակցիաներ , որոնց արդյունքում գլխավոր մրցանակի արժանացած հաճախորդները շահել են ուղեւորություն դեպի Դիսնեյ Լենդ, Թուրին, Եգիպտոս, ԴուբայՊրահա:

Կոնվերս բանկում ներկայումս գործում են «Շանս», «Պրոգրես», «Օրական», «Թոշակ» եւ «Բարեկեցիկ ապագա», ավելացման իրավունքով՝ «Կարաս», երեխաների անունով՝ կուտակային «Մանուկ» ավանդատեսակները:


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝2.11..2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: